Աշոտ Ղուկասյան
Արսեն Ղուկասյան
Արմեն Ղուկասյան

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ

Մեթոդական ուղեցույց

5

Աշոտ Ղուկասյան, Արսեն Ղուկասյան, Արմեն Ղուկասյան

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

5

Մեթոդական ուղեցույց

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

Երևան 2023

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ուսուցիչներ

Հայաստանում կրթական բարեփոխումները սկսվեցին հանրապետության անկախացումից հետո և շարունակվում են մինչև այսօր: Այդ ընթացքում փոխվեցին հանրային պահանջն ու պատվերը կրթության նկատմամբ: Կատարվեցին համակարգային ու կառուցվածքային էական փոփոխություններ: Անցում կատարվեց 12-ամյա կրթությանը, դպրոցը դարձավ եռաստիճան՝ տարրական, հիմնական (միջին) և ավագ: Այսօր էլ դեռ շարունակվում են դպրոցի կառավարման կառուցվածքային փոփոխությունները: Բարդ ու երկարատև ընթացք ունեցան նաև բովանդակային փոփոխությունները: 1990-ական թթ. մշակված ծրագրերը մի քանի անգամ լրամշակվեցին ու փոփոխվեցին: 2019-2020 թթ. սկսվեց չափորոշիչների ու առարկայական ծրագրերի մշակման մի նոր փուլ: 2021-2022 թթ. Տավուշի մարզում տեղի ունեցան 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների նոր չափորոշիչների ու ծրագրերի փորձարկումները: Դրանց մեջ էին մտնում նաև 5-րդ դասարանի «Իմ հայրենիքը» նոր առարկայի չափորոշիչն ու ծրագիրը: Փորձարկումից հետո որոշ փոփոխություններ կատարվելուց հետո 2022թ. նոյեմբերի 30-ին այն հաստատվեց ԿԳՄՍ նախարարության կողմից: Պետք է ասել, որ «Իմ հայրենիքը» բոլորովին նոր առարկա չէ, այն մինչ այդ գործող «Հայրենագիտություն» առարկայի էապես լրամշակված, նոր թեմաներով հարստացված տարբերակն է: «Իմ հայրենիքը» դասընթացում ընդգրկված նյութերը հնարավորություն են տալիս ճանաչել հայոց հայրենիքն ամբողջության մեջ և աշխարհի հետ հարաբերություններում: «Իմ հայրենիքը» առարկայի դասընթացը դպրոց է մտնում 2023-2024 թթ. ուստարվանից: Հաջող մեկնարկի համար կան բոլոր հնարավորությունները: Ուսուցիչներն իրենց ձեռքի տակ ունեն հանրակրթական չափորոշիչը, «Իմ հայրենիքը» առարկայի չափորոշիչը և ծրագիրը: Բացի այդ, առկա է այն հարուստ ու ուսանելի փորձը, որ ավելի քան մեկուկես տասնամյակ կուտակվել է հայրենագիտության դասավանդման ընթացքում: Դասընթացի արդյունավետության բարձրացմանը կնպաստեն նաև էլեկտրոնային տարբերակով մեծ թվով ուսումնական հետաքրքիր նյութերը, զարմանք ու հետաքրքրություն առաջացնող փաստերն ու երևույթները: Դրանց օգտագործումը դասերին մեծապես կնպաստի դասերի որակի և արդյունավետության բարձրացմանը: Մաղթում ենք ձեզ արգասավոր աշխատանք:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

5-րդ դասարանի «Իմ հայրենիքը» մեթոդական ուղեցույցը ստեղծվել է հանրակրթական պետական չափորոշչի և ծրագրի սկզբունքներին, պահանջներին ու բովանդակությանը համապատասխան: Ուղեցույցը նպատակ ունի օգնել առարկան դասավանդող ուսուցիչներին՝ կազմակերպելու և անցկացնելու որակյալ կրթություն ապահովող դասեր: Ուղեցույցը բաղկացած է հետևյալ բաժիններից.

I. Հանրակրթության պետական և «հայրենագիտական» բնագավառի չափորոշիչները: Ընդհանուր բնութագիր:
II. «Իմ հայրենիքը» առարկայի ուսուցման տեսություն:
III. Ուսումնամեթոդական նյութեր:
IV. Գրականության ցանկ:

Առաջին բաժնում ներկայացվում է հանրակրթական պետական ու հանրակրթական հիմնական ծրագրի հայրենագիտական ուսումնական բնագավառի և առարկայական չափորոշչի և ծրագրի ընդհանուր բնութագիրը, խոսվում է կարողունակությունների, վերջնարդյունքների, բովանդակային բաղադրիչների, հիմնական գաղափարների, խաչվող հասկացությունների և այլնի մասին:

Երկրորդ բաժինն ունի տնտեսական բնույթ: Այստեղ ամբողջական և համակարգված պատկերացում է տրվում մանկավարժական ժամանակակից մոտեցումների, դիդակտիկական սկզբունքների, դասավանդման մեթոդիկայի, կառուցվածքի և «Իմ հայրենիքը» առարկայի ուսուցման հետ կապված այլ խնդիրների մասին:

Երրորդ բաժինն ունի գործնական բնույթ: Նրանում տրվում են մեթոդական խորհուրդներ, մի շարք ծրագրային թեմաների վերաբերյալ բերվում են դասի պլանի, թեմատիկ պլանավորման նմուշ-օրինակներ, ուսումնամեթոդական նյութեր և այլն:

Չորրորդ բաժնում ուսուցչին ուղղված առարկայական և մեթոդական գրականության և էլեկտրոնային գրականության ցանկերն են:

ԲԱԺԻՆ Ի. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ «ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ» ԲՆԱԳԱՎԱՌԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Իմ հայրենիքը» առարկայի արդյունավետ դասավանդման համար խիստ կարևոր է, որ այն դասավանդող ուսուցիչներն ամբողջական պատկերացում ունենան հանրակրթական պետական չափորոշչի որակական պահանջների, հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնական բնագավառների և դրանց բովանդակության մասին: Այդ նպատակով անհրաժեշտ է համառոտ ներկայացնել դրանց՝ առարկային առնչվող բովանդակային հարցերը:

Հանրակրթական պետական չափորոշչում առանցքային նշանակություն ունեն կարողունակությունները և ակնկալվող վերջնարդյունքները:

Կարողունակությունները սովորողների գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ստեղծված իրավիճակների արդյունավետ արձագանքման ձևեր են: Չափորոշչում սահմանված են ութ կարողունակություններ, որոնք ապահովում են անհատի, հասարակության և աշխարհի միջև կապերը: Կարողունակությունները ձևավորվում են ուսումնառության ընթացքում ուսուցման և դաստիարակության կազմակերպման տարբեր ձևերի և ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով: Կարողունակությունների ձևավորմանն են ուղղված հանրակրթական հիմնական ծրագրերի վերջնարդյունքները: Այս վերջնարդյունքները ներկայացված են ըստ կրթական երեք աստիճանների՝ տարրական, հիմնական և միջնակարգ դպրոցների ու ուսումնական բնագավառների: Հանրակրթական հիմնական ծրագրի ընդհանրական ուսպլանում սահմանված են յոթ ուսումնական բնագավառներ (հայոց լեզու և գրականություն, օտար լեզուներ, ԲՏՃՄ, հասարակագիտություն և այլն), որոնցից մեկը հայրենագիտությունն է: Ուսումնական բոլոր բնագավառների բովանդակությունը կազմված է չորս բաղադրիչներից՝ գիտելիքից, հմտությունից, արժեքներից և վերաբերմունքից:

«Հայրենագիտություն» ուսումնական բնագավառի չափորոշիչը

2023 թ. մարտի վերջին հաստատվեց «Հայրենագիտություն» ուսումնական բնագավառի չափորոշիչը: Այն բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. «Հայագիտություն» բնագավառի ուսուցման նպատակները՝ ըստ կրթական աստիճանների:
2. Հայագիտության բնագավառի ընդհանուր բնութագիրը:
3. Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:
4. «Հայրենագիտություն» բնագավառի բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները:
5. Հիմնական գաղափարները:
6. Խաչվող հասկացություններ:

7. Ուսումնական գործընթացին ուսումնամեթոդական և նյութատեխնիկական աջակցություն:
8. Օգտագործված գրականության ցանկ:

Ինչպես ցույց են տալիս չափորոշչի բաժինները, ուսուցման ընթացքում խիստ կարևորվում են ուսումնառության հետ կապված գրեթե բոլոր հարցերը: Այս բանագավառի ուսուցիչները լուրջ աշխատանք պետք է կատարեն առարկաների նպատակների, վերջնարդյունքների, հիմնական գաղափարների, խաչվող (փոխանցվող) հասկացությունների ուղղությամբ: Դրանց պետք է ուղղված լինի նրանց ողջ գործունեությունը: Այժմ կփորձենք ուսուցիչներին համառոտակի ներկայացնել նշված բաժինների բովանդակությունը:

«Հայրենագիտություն» ուսումնական բնագավառում ներկայացված են.

ա) նպատակը.

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայրենագիտություն» բնագավառի ուսումնասիրման նպատակը պետականամետ մտածողությամբ օժտված, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարությունը պատմության խորապատկերում գիտակցող, ազգային ու համամարդկային արժեհամակարգ կրող ազնիվ, հայրենասեր և պատասխանատու քաղաքացու ձևավորումն է:

բ) ներառված առարկաները.

«Հայրենագիտություն» ուսումնական բնագավառը ներառում է

1. հանրակրթական դպրոցի 5-12-րդ դասարաններում ուսումնասիրվող հետևյալ առարկաները.

5-րդ դասարան - «Իմ հայրենիքը»,

6-րդ դասարան - «Իմ հայրենիքն ու աշխարհը»,

7-12-րդ դասարաններ - «Հայոց պատմություն»:

Նրանցում նշվում են նաև առարկաների բովանդակությունը կազմող թեմաները:

2. Ակնկալվող վերջնարդյունքները.

Բնագավառի ակնկալվող վերջնարդյունքները տրված են ըստ կրթական աստիճանների և առարկաների (տե՛ս հավելված, միայն «Իմ հայրենիքը» առարկայի վերջնարդյունքները, բաժին 3, 15-22 կետեր):

բ) հիմնական գաղափարը

«Հայրենագիտություն» բնագավառի բովանդակությունը ձևավորված է հետևյալ գաղափարների հենքի վրա.

- Անհատ և պետություն,
- Ինքնորոշում և պայքար,
- Ինքնություն,
- Համակեցություն,

Նշված հիմնական գաղափարները հստակեցվում և կոնկրետացվում են ենթահասկացությունների միջոցով, որոնցից են՝ հայրենիք, մշակույթ, արժեհամակարգ, կրոն, դավանանք, հասարակություն և այլ հասկացություններն, իրենց հերթին Երրորդ մակարդակում 2-րդ ենթահասկացությունները տրոհվում են բովանդակային պարզ ու կոնկրետ բաղադրիչ տարրերի: Այսպես «ինքնություն» հիմնական գաղափարում առանձնացվում են «հայրենիք», «մշակույթ», «արժեհամակարգ», «կրոն և դավանանք» 2-րդ ենթահասկացությունները: Իսկ ասենք օրինակ՝ «Իմ հայրենիքը» թեմայի ուսումնասիրման ժամանակ «հայրենիք» ենթահասկացությունը տրոհվում է բովանդակային պարզ բաղադրիչների և համապատասխանեցվում է փոքր հայրենիքին, մարզին, բնակավայրին, գյուղին, քաղաքին: Պետք է նկատի ունենալ, որ հաճախ հնարավոր չի լինում այդ համապատասխանեցումը, իսկ երբեմն էլ ենթահասկացությունները կարող են վերաբերել մի քանի հիմնական հասկացության:

Հիմնական գաղափարները ուսումնասիրվում են պարուրաձև՝ 5-րդ դասարանում սովորողների արդեն ձևավորված նախնական պատկերացումների վրա, իսկ 7-9-րդ և 10-12-րդ դասարաններում՝ «Հայոց պատմություն» առարկայի շրջանակներում ուսուցանվող ուսումնական նյութի աստիճանական ընդլայնման և խորացման հիման վրա:

դ) Ուսումնառության հիմքում դրված մոտեցումներ

«Հայրենագիտություն» բնագավառում մշակվել են շուրջ մեկ տասնյակ մոտեցումներ, որոնք դրվել են նրանում ներառված «Իմ հայրենիքը», «Իմ հայրենիքն ու աշխարհը», «-Հայոց պատմություն» առարկաների ուսումնառության հիմքում:

Ուսումնառության այդ մոտեցումները հիմնված են.

1. Հասկացությունների վրա:
2. Ուսումնական նախագծերի իրականացման վրա:
3. Տարբերակված ուսուցման և համընդհանուր ներառման վրա:
4. Ինքնուրույն–անհատական աշխատանքի վրա:
5. Խնդրահարույց հարցերի հետազոտության վրա:
6. ՀՊՁ-ով սահմանված առանցքային կարողունակությունների զարգացման վրա:
7. Հաղորդակցական-համագործակցային հմտությունների զարգացման վրա:
8. Քննադատական, վերլուծական, հետազոտական և ստեղծագործական մտածողության զարգացման վրա:
9. Արժեհամակարգի ու դիրքորոշումների ձևավորման վրա:

ե) Խաչվող հասկացություններ

Արագ փոփոխվող աշխարհում խիստ կարևորվում է աշխարհի մասին ընդհանրական, միասնական ու ամբողջական աշխարհայացք ունենալը: Այդ նպատակով հանրակրթական հիմնական ծրագրի բոլոր ուսումնական բնագավառների չափորոշիչներում ներառվել են խաչվող հասկացություններ: Խաչվող հասկացություններն այն ընդհանրական փոխանցվող հասկացություններն են , որոնք սովորողների մեջ ձևավորում են աշխարհի մասին համապարփակ և գիտականորեն հիմնավորված պատկերացումներ: Այդ խաչվող

առանցքային հասկացությունները միաժամանակ տեսակետներ կառուցելու լավագույն միջոցներն են: Առաջարկվում են հետևյալ խաչվող հասկացությունները.

1. Օրինաչափություն
2. Պատճառ – հետևանք
3. Զարգացում
4. Կառուցվածք և գործառույթ
5. Ժամանակ և տարածություն
6. Համակարգ
7. Համաշխարհայնացում
8. Կայունություն և փոփոխություն
9. Անհատներ և հարաբերություններ
10. Անհատական և մշակութային արժեհամակարգ

զ) «Հայրենագիտություն» բնագավառում ներառված առարկայական ծրագրերը

«Հայրենագիտություն» բնագավառի բովանդակությունը կոնկրետացվում է առարկայական ծրագրերով: Ինչպես արդեն ասվել է, «Հայագիտություն» բնագավառի չափորոշչում ներկայացված է առարկայական ծրագրերի ընդհանուր բնութագիրը:

5-րդ դասարանի «Իմ հայրենիքը» առարկայի ծրագիրը ներառում է հայ ժողովրդի ծագումնաբանության, հայրենիքի, ազգային կյանքի, կենցաղի, մշակույթի, ավանդապատումների, հայոց քրիստոնեական արժեհամակարգի, «Սասունցի Դավիթ» էպոսի, հասարակության վրա անհատի դերի և ազդեցության վերաբերյալ և այլ թեմաներ:

6-րդ դասարանի «Իմ հայրենիքն ու աշխարհը» առարկայի ծրագիրը ներառում է քաղաքակրթությունների պատմության հնագույն շրջանը՝ ներառելով քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական պատմությունը:

7-9-րդ դասարանների «Հայոց պատմություն» առարկայի ծրագիրն ընդգրկում է հայ ժողովրդի ծագումնաբանությունը, հայոց քաղաքակրթության ձևավորման ու զարգացման պատմաաշխարհագրական միջավայրի Ք.ծ.ա. 4-րդ հազարամյակից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածի պատմությունը:

10-12-րդ դասարանների «Հայոց պատմություն» առարկայի ծրագրում ներառված են «պետականություն», «ազատագրական պայքար» և «նորարարություն» բովանդակային բաղադրիչները:

«Իմ հայրենիքը» և «Իմ հայրենիքն ու աշխարհը» առարկաների ծրագրերը կառուցված են բովանդակային (թեմատիկ) հաջորդականությամբ, առասպելներից մինչև իրական պատմական կերպարներ ու բուն պատմություն:

7-9-րդ դասարանների «Հայոց պատմություն» առարկայի ծրագրի կազմման հիմքում ընկած է ուսումնասիրության գծային մոդելը՝ իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությամբ: Այս մոդելում գործածվում են քաղաքակրթական և ֆորմացիոնային սկզբունքները:

10-12-րդ դասարանների «Հայոց պատմություն» առարկայի ծրագրի կազմման հիմքում դրվել է մի քանի առանցքային բովանդակային բաղադրիչների (պետականություն,

ազատագրական պայքար, նորարարություն) խորությամբ յուրացումը, որն իրականացվում է պատճառահետևանքային կապերի վերհանմամբ և քննադատական վերլուծությամբ:

է) Առարկայական ծրագրերի առանձնահատկությունները

Առարկայական ծրագրերը, որոնք մշակվել են «Հայրենագիտություն» բնագավառի չափորոշչի հիման վրա, համապատասխանում են ժամանակակից դիդակտիկայի սկզբունքներին (մատչելիություն, պարզից դեպի բարդ, տարիքային և անհատական առանձնահատկություններ), գիտության և մշակույթի ժամանակակից նվաճումներին:

Առարկայական ծրագիրը նորմատիվային փաստաթուղթ է, որը ներառում է ուսումնական առարկայի՝

- նպատակը,
- առարկայի ընդհանուր բնութագիրը,
- ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները,
- բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները,
- ժամաքանակի բաշխումը,
- թեմաները և դրանց բովանդակությունը,
- թեմաների ուսումնառության ակնկալվող արդյունքները,
- վերջնարդյունքների գնահատումը:

Նկատի ունենալով «հայրենագիտություն» բնագավառի չափորոշիչը, դժվար չէ նկատել, որ, ի տարբերություն նախկին ծրագրերի բովանդակության առարկայակենտրոն մոտեցման, նոր ծրագրերը միտված են դեպի ինտեգրված բովանդակությունը: Այդ են վկայում խաչվող հասկացությունները և միջառարկայական կապերը, որոնք առանցքային տեղ են գրավում առարկայական ծրագրերում:

Խաչվող հասկացությունները, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար, օգնում են սովորողներին միավորելու, փոխկապակցելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները՝ վերածելով դրանք ամբողջացման լավագույն միջոցի:

Միջառարկայական կապերը նույնպես հանդես են գալիս որպես ուսումնական առարկաների բովանդակությունը միավորող, ամբողջացնող և ինտեգրումն ապահովող կարևոր միջոց: Միջառարկայական կապերն իրականացվում են ցանկացած թեմայի դասավանդման ժամանակ: Միջառարկայական կապերի միջոցով անցկացվում են զուգահեռներ տարբեր առարկաների բովանդակության մեջ առկա գաղափարների, երևույթների և փաստերի միջև, բացահայտվում են նրանց անխզելի կապերը և փոխկապակցվածությունը:

Նոր ծրագրերի առանձնահատկություններից է նաև այն, որ դրանց մեջ տրված են յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրման նպատակները, դրանցից բխող վերջնարդյունքները և ուսումնական գործունեության ձևերը, որոնք մեծապես կարող են օգնել ուսուցչին արդյունավետ կազմակերպելու ուսուցման գործընթացը:

ԲԱԺԻՆ II. «ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. «Իմ հայրենիքը» դասընթացի նպատակն ու խնդիրները

«Իմ հայրենիքը» առարկան ընդհանուր ներածական, միասնացված դասընթաց է, որի հիմքում ընկած է հայրենիքի ու հայրենի աշխարհի ճանաչողությունը: Դասընթացը նպատակ ունի՝

- զինել աշակերտներին մեր հայրենիքի, նրա պատմության, աշխարհագրության, մշակույթի, ազգային արժեքների մասին նախնական գիտելիքներով,
- պատկերացում տալ մեր ժողովրդի ստեղծած բանահյուսական գոհարների, առասպելների, վիպական երգերի ու զրույցների, «Սասնա ծռեր» դյուցազնավեպի մասին,
- ծանոթացնել հայ մշակույթի նշանավոր գործիչներին, նրանց բարձրարվեստ ստեղծագործություններին, արվեստի գործերին ու կոթողներին, պատմական հուշարձաններին,
- ձևավորել հուզական-արժեքային և հոգատար վերաբերմունք շրջապատող միջավայրի՝ բնության, նրա գեղեցկության, իր փոքր հայրենիքի (մարզ, քաղաք, գյուղ) նկատմամբ,
- հպարտությամբ, արժանապատվությամբ ու հարգանքով լցնել աշակերտների սրտերը հայոց պետականության տարբեր փուլերի, Հայաստանի երեք հանրապետությունների, նրանց ձեռքբերումների, բանակի, պետական խորհրդանիշների, տոների ու մայրաքաղաքների հանդեպ,
- դաստիարակել բարձր պատասխանատվության զգացում հայրենի երկրի ու արժեքների նկատմամբ: Որքան խորն է հայոց աշխարհի ճանաչողությունը, այնքան ավելի պատասխանատու են զգում իրենց աշակերտները հայրենի եզերքի ու բնակավայրի նկատմամբ,
- ներկայացնել մեր ժողովրդի քաջարի զավակների, պետական, քաղաքական, մշակույթի և հոգևոր գործիչների ազգանվեր գործունեությունը, խիզախ ու հայրենասեր նահապետների, զորավարների ու հերոսների անմահ սխրանքները, սերմանել անսահման սեր և հարգանք նրանց կյանքի ու գործի նկատմամբ,
- ցույց տալ Հայ առաքելական եկեղեցու ու հավատքի անսասան հիմքերը, նրանց դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում,
- պատկերացում տալ ամբողջական հայրենիքի առանձին հատվածների, այսինքն փոքր հայրենիքների (մարզ, քաղաք, գյուղ) բնապատմական պայմանների, մեր ժողովրդի զբաղմունքի, կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարք ու բարքի, ինչպես նաև տոների, ծեսերի, տարազի և այլնի մասին: Այդ գիտելիքները և պատկերացումները աշակերտներին ավելի կմոտեցնեն ազգային ակունքներին, նրանք ավելի ուժեղ և ամուր կկանգնեն հայրենի հողի վրա, կզգան նրա ուժն ու զորությունը,

- ցույց տալ հարազատ մարզի, գյուղի, քաղաքի տեղն ու դերը մեր երկրի պատմության մեջ, տեսանելի դարձնել այն ներդրումը, որ ունեցել է մարզը, բնակավայրը պատմական անցյալում և այժմ էլ շարունակում է ունենալ Հայաստանի Հանրապետության քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում: Հայրենիքի շենացման և հզորացման գործում վտքրիկ հայրենիքի (մարզի, քաղաքի, գյուղի) խաղացած դերի գիտակցումը ոգևորության, արժանապատվության և հպարտության նոր լիցք կհաղորդի աշակերտներին:

2. Դասընթացի բովանդակությունը, կառուցվածքը և ժամաքանակը

«Իմ հայրենիքը» դասընթացն ունի պարզ կառուցվածք և բովանդակություն: Դասընթացը ներառում է 5 թեմա « Ես ապրում եմ լեռնային երկրում: Քարտեզն իմ գործիքն է ժամանակի և տարածության մեջ», «Հայերի (իմ) ծագումնաբանությունը. Հայկական լեռնաշխարհի բնակիչների կյանքը, կենցաղն ու ավանդապատումները», «Հայոց քրիստոնեական արժեհամակարգը», «Իմ հայրենիքի էպոսը՝ «Սասնա ծռեր» և այլ ժողովուրդների էպիկական պատումները», «Անհատն ու հասարակությունը»: Փաստորեն, թեմաները կազմված են «Իմ հայրենիքը» առարկայի հիմնական ուսումնական բնագավառներին համապատասխան (հայրենիք, երկիր, մարզ, համայնք, եկեղեցի, տոներ, մշակույթ, զբաղմունք, կենցաղ, խոհանոց, էպոս, անհատ ու հասարակություն և այլն): Դասընթացը կառուցված է թեմատիկ միավորների ձևով: Թեմաների ժամանակագրությունը ներկայացվում է ոչ թե գծային, այլ պարույրի սկզբունքով և վերստին կրկնվում է: Տարածքային առումով այն ընդգրկում է պատմական Հայաստանը, իսկ ժամանակագրական առումով՝ Ք.ծ.ա. 4-3-րդ հազարամյակներից մինչև մեր օրերը:

«Իմ հայրենիքը» դասընթացի ուսումնասիրման համար շաբաթական հատկացվում է 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ: Դրանց որոշ մասը հատկացված է միավորային գնահատմանը, հետադարձ կապերին և ամփոփումներին:

3. «Իմ հայրենիքը» 5-րդ դասարանի դասագիրքը

Ուսուցումը չի կարելի պատկերացնել առանց լավ դասագրքի: Լավ դասագիրքը ուսուցչի օգնականն է, աշակերտի զրուցակիցն ու գործընկերը, նրա գիտելիքների հիմնական աղբյուրը: Այս միտքը մշտապես ուղեկցել է հեղինակներին «Իմ հայրենիքը» դասագրքի ստեղծման ընթացքում: Այն համապատասխանում է առարկայի չափորոշչի, ծրագրի բովանդակությանը և կառուցվածքին:

- Դասագիրքը մշակելիս այն համեմատվել է չափորոշչի, «Հայոց պատմություն» առարկայի դասագրքերի հետ միասնական մոտեցում ապահովելու, ավելորդ կրկնությունից խուսափելու, նույն դեպքերի և երևույթների մասին փաստացի անճշտությունները հաղթահարելու, պատմաաշխարհագրական անունների, տերմինների գրության տարբերությունները ճշտելու համար: Դասագրքի հետաքրքիր բաղադրիչներից է «Գիտե՞ք, որ...»-ը: Նրանում սովորողների հետաքրքրությունը շարժող տեղեկություններ են թեմայի հետ առնչվող գործիչների, իրադարձությունների ու երևույթների մասին:

- Դասագիրքն ունի մեթոդական ու կողմնորոշման ապարատներ, լրացուցիչ և տեղեկատվական նյութեր, փաստեր ու վավերագրեր (քաղվածք սկզբնաղբյուրից, մամուլից, համացանցից, գեղարվեստական ու մասնագիտական գրականությունից), ուշագրավ նկարազարդումներ, քարտեզներ, տարբեր տիպի գծանկարներ (աղյուսակ, սխեմա, դիագրամ և այլն), հղումներ, ծանոթագրություններ, աշակերտների ընթերցանության համար նախատեսված գրականության ցանկեր:
- Դասագրքի նյութերը շարադրված են հաշվի առնելով 5-րդ դասարանի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, հակումներն ու հետաքրքրությունները, նախորդ դասարաններից նրանց ունեցած գիտելիքները և անձնական փորձը: Ուսումնական նյութը մատուցվում է պարզ ու հասկանալի հայերենով, աշակերտների տարիքին ու զարգացման աստիճանին համապատասխանող բառապաշարով ու ծավալով, հիմնական հասկացությունների մատչելի մեկնաբանություններով:
- Դասագրքի շարադրանքն ավելի գրավիչ, հետաքրքիր և գործնական դարձնելու համար երբեմն օգտագործվում են ասույթներ, թևավոր խոսքեր, մարդկանց ու դարաշրջանները բնութագրող արտահայտություններ, հատվածներ գեղարվեստական գրականությունից, բանաստեղծություններ: Դասագրքի նյութերը համեմվել են տպավորիչ օրինակներով, դեպքերի ու երևույթների սյուժետային ու պատկերավոր նկարագրումներով:
- Դասագիրքն ունի հարցեր ու առաջադրանքներ, որոնք ուղղված են ինչպես գիտելիքները վերհիշելուն, վերարտադրությանը և վերաիմաստավորմանը, այնպես էլ տարբեր իրավիճակներում ղրանց կիրառման կարողությունների ու հմտությունների բացահայտմանը, ստեղծագործական մտածողության ու երևակայության զարգացմանը: Հարցերն ու առաջադրանքները այնպես են կազմված, որ ապահովեն աշակերտների և դասագրքի երկխոսությունը: Հարցերի ու առաջադրանքների մեջ կիրառվում են «Ձեր կարծիքով», «Կարո՞ղ եք հիմնավորել», «Բերեք փաստարկներ» արտահայտությունները (օրինակ՝ Դաս 39. Ձեր կարծիքով ճիշտ էր, արդյոք, այլ ժողովուրդներին ազատությունից զրկելուց Սասնա դյուցազունների հրաժարվելը: Հիմնավորեք ձեր պատասխանը):
- Դասագրքի բովանդակությունն ունի գործնական ու կիրառական ուղղվածություն, ուսումնական նյութը կապվել է հասարակական կյանքի տարբեր իրավիճակների, հասարակական ու բնական միջավայրերի, հայրենի երկրի ու բնակչության, անվանի մարդկանց գործունեության հետ: Փորձ է արվել գտնել աղերսներ ու առնչություններ ուսումնական նյութի և աշակերտի անձնական կյանքի միջև: Գործնական կապը կյանքի հետ հիմնականում իրականացվել է տեղայնացման և որոշակիացման ճանապարհով (օրինակ՝ Դաս 32. Կուզեի՞ք նմանվել Սասունցի Դավթին, ինչո՞ւ: Հիմնավորեք ձեր պատասխանը):

Այսպիսով՝ 5-րդ դասարանի «Իմ հայրենիքը» դասագիրքը ստեղծելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ լավ դասագիրքը լուսավոր ջահ է ուսուցչի ձեռքին՝ լուսավորելու աշակերտներին դեպի գիտության բարձունքներ տանող դժվար ու անանցանելի արահետները:

4. Իմ հայրենիքը» առարկայի դասավանդման մեթոդները

Ա. «Իմ հայրենիքը» առարկայի ուսուցման մեթոդները և դրանց դասակարգումը

Այսօր, երբ արդեն մշակվել են առարկայական նոր չափորոշիչներ և ծրագրեր: Հիմնական պահանջներից մեկը դարձել է չափորոշչահեն ուսուցումը: Կարևոր խնդիր է դարձել սովորել սովորեցնելը: Այդ նպատակով առաջնային է համարվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդների ու մեթոդական հնարների իմացությունը: «Իմ հայրենիքը» առարկայի դասավանդման մեթոդիկայում ներառվում են՝

- **խոսքային մեթոդներ** (պատմել, զրույց, շարադրություն և այլն),
- **զննական-ցուցադրական մեթոդներ** (նկարազարդումներ, ցուցադրումներ),
- **գործնական մեթոդներ** (փորձեր, վարժություններ, տնային առաջադրանքների կատարում և այլն),
- **տրամաբանական** (ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիակամ համանմանություն և այլն)
- **ուսումնական գործողությունների ինքնակազմակերպման մեթոդներ** (աշխատանք դասագրքով)
- **հետաքրքրությունների խթանման մեթոդներ** (ճանաչողական խաղեր, բանավեճեր, խնդրահարույց իրավիճակներ և այլն),
- **ինտերակտիվ-կառուցողական մեթոդներ** (խճանկար, ուսումնական բանավեճ, խաղ՝ դերերով, դեպքի ուսումնասիրություն, աշխատանք սկզբնաղբյուրով և այլն),
- **համագործակցային ուսուցման մեթոդներ** (թիմային առաջադիմություն, շրջագայություն պատկերասրահում, խմբային հետազոտություն և այլն),
- **քննադատական մտածողության զարգացման մեթոդներ** (ԽԻԿ համակարգ, փոխներգործուն գրառումների համակարգ և այլն):

Սրանք մանկավարժության մեջ մեթոդների տարածված դասակարգումներն են: Այժմ փորձենք ներկայացնել դրանց մեջ մտնող ավանդական և ժամանակակից առավել հայտնի այն մեթոդներից մի քանիսը, որոնք խորհուրդ է տրվում կիրառել «Իմ հայրենիքը» առարկայի ուսուցման գործընթացում:

Բ. Մեթոդներ

1) Զրույցի մեթոդ

Սա ուսուցման առավել տարածված, արդյունավետ ավանդական մեթոդներից է, հաջողությամբ է գործում հայրենագիտության դասավանդման ընթացքում: Զրույցն ուսուցման այն մեթոդն է, որի դեպքում ուսուցիչը վարպետորեն մշակված հարցերի միջոցով աշակերտների մեջ ակտիվացնում է նրանց արդեն ունեցած գիտելիքներն ու կարողությունները, խթանում նրանց նոր գիտելիքների ձևավորումը՝ ինքնուրույն վերլուծությունների, դատողությունների, եզրահանգումների միջոցով:

Զրույցի մեթոդը կարելի է օգտագործել դասի տարբեր փուլերում: Այն առավել արդյունավետ է աշակերտներին դասարանական աշխատանքների նախապատրաստելիս, նոր դասանյութը ուսումնասիրելիս, գիտելիքները համակարգելիս և էլի ուրիշ փուլերում:

Այս մեթոդն ուսուցչից պահանջում է լուրջ նախապատրաստական աշխատանք: Նա պետք է հստակ սահմանի զրույցի թեման, նպատակը, կազմի պլան, ընտրի ուսումնադիտողական պիտույքներ, ձևակերպի հիմնական և օժանդակ հարցեր, որոնք հնարավոր է՝ առաջանան զրույցի ընթացքում: Նա պետք է մտածի առանձին հարցերի, դրանց առաջադրման հերթականության, պատասխանների ու եզրահանգումների շուրջ: Կարևոր է, որ հարցերը ճիշտ ձևակերպվեն, ունենան տրամաբանական կապ և հաջորդականություն, բացահայտեն ուսումնասիրվող նյութի էությունը, նպաստեն գիտելիքների համակարգմանը: Խորհուրդ չի տրվում առաջարկել պարզունակ, երկարաշունչ կամ երկիմաստ, «հուշող» պատրաստի պատասխաններ ենթադրող հարցեր: Զրույցի ժամանակ շատ կարևոր է հարց ու պատասխանի հնարի կիրառումը: Դասարանին կամ խմբերին ուղղված յուրաքանչյուր հարցից հետո ուսուցիչը մտածելու համար տալիս է ոչ մեծ դադար, որից հետո լսում աշակերտներից որևէ մեկի պատասխանը: Եթե աշակերտները չեն կարողանում պատասխանել հարցին, ուսուցիչը վերաձևակերպում, ավելի է հստակեցնում հարցերը, դրանք մասնատում կամ նոր օժանդակող հարցեր է տալիս: Զրույցը պետք է դասարանում ապահովի աշխույժ հաղորդակցություն: Ուսուցիչը պետք է հետևի, որ բոլորն ակտիվորեն մասնակցեն զրույցին, ուշադիր լսեն հարցերը, մտածեն պատասխաններ, քննարկեն իրենց ընկերների պատասխանները, փորձեն արտահայտել սեփական կարծիքը: Ուսուցիչը հնարավորություն պետք է ստեղծի, որպեսզի աշակերտները շտկեն իրենց պատասխանները, դիմեն ընկերների օգնությանը: Չեն խրախուսվում թեմայից շեղող, դրա հետ կապ չունեցող և ակտիվության պատրանք ստեղծող հարցադրումները:

2) Ուսումնական բանավեճ

Ուսումնական բանավեճն աշակերտների ակտիվ մասնակցությամբ հիմնահարցի ճիշտ լուծման ուղիների որոնումն է մտքերի, դրույթների, կարծիքների նպատակային և որոշակիորեն կարգավորված փոխանակման, քննարկման միջոցով: Բանավեճը ոչ այնքան աշակերտների՝ միմյանց տրված հարցերի ու դրանց պատասխանների շարք է, այլ առկա հիմնահարցի քննարկում, լուծումների որոնում և դրանց համար զործադրված ջանքերի կազմակերպում: Բանավեճը, ի տարբերություն զրույցի մեթոդի, սովորաբար սահմանափակվում է մեկ առանձին թեմայով կամ հիմնահարցով և կառուցվում է որոշակիորեն սահմանված կարգով: Բանավեճի համար կարևոր է դասարանում բարենպաստ մթնոլորտի ձևավորումը և աշակերտների դասավորությունը: Նրանք պետք է նստեն շրջանաձև, որպեսզի յուրաքանչյուր մասնակից տեսնի մյուսների դեմքը:

Բանավեճի համար կարևոր է նրա ներածական մասի կազմակերպումը, որի ժամանակ տրվում են անհրաժեշտ տեղեկություններ քննարկվող հարցերի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար: Ներածական մասը կարելի է կազմակերպել աշխատանքային փոքր խմբերով, կամ նախապես մեկ կամ մի քանի աշակերտների հանձ-

նարարել հանդես գալ հիմնահարցի վերաբերյալ հաղորդումով: Երբեմն էլ ուսուցիչն ինքը կարող է նախնական համառոտ հարցում անցկացնել: Բացի հիմնահարցի ներկայացումից, կարելի է առաջարկել բանավեճ սկսելու մի քանի այլ տարբերակներ.

- *տեսանյութի դ/ֆ կամ կ/ֆ ցուցադրում,*
- *ուսումնական նյութի (առարկա, պատկերային նյութ) ցուցադրում,*
- *նոր տեղեկությունների հաղորդում,*
- *ձայնագրությունների ունկնդրում,*
- *բեմականացում, որևէ դրվագի դերերով ներկայացում,*
- *խթանող հարցերի առաջադրում՝ ի՞նչ, ինչպե՞ս, ինչո՞ւ և այլն:*

Բանավեճի անցկացման ընթացքում ուսուցչի հիմնական միջոցը պլանը և հարցերն են: Պլանը որոշում է տեղեկատվության կազմակերպման եղանակը: Հարցերը տալուց հետո անհրաժեշտ է մտածելու համար ժամանակ տալ: Պատասխանելիս, եթե աշակերտն իր միտքը հստակ չի ձևակերպել, կարելի է համառոտ վերաշարադրանքի հնարավորություն տալ: Հետաքրքիր մեթոդական հնար է նաև միտքը շարունակելու առաջարկը (օրինակ՝ Ինձ թվում է, հարցի քննարկումը կարելի է շարունակել հետևյալ ուղղությամբ. «Դա ճիշտ է, բայց հարցը կարելի է դիտել նաև այլ տեսանկյունից»): Երբ բոլորն են հարցի շուրջ հայտնում իրենց կարծիքներն ու տեսակետները, փաստարկներն ու հիմնավորումները, ուսուցիչն ամփոփում է բանավեճի արդյունքները: Ամփոփումը պետք է լինի հակիրճ, բովանդակալից և ամբողջական:

3) Դեբատ

Դեբատը բանավեճի հիմնական ձևերից է: Այն բանավեճի մրցակցային ձևն է: Դեբատը՝ որպես ուսուցման արդյունավետ միջոց, նպաստում է աշակերտների մտահորիզոնի ընդլայնմանը, մտավոր, հետազոտական, ստեղծագործական և կազմակերպման կարողությունների զարգացմանը:

Դեբատը տարբեր թեմաներով անցկացվող բանավեճ է, որի ընթացքում 2 մրցող թիմեր քննարկվող հարցի վերաբերյալ ներկայացնում են իրենց տեսակետները, փաստարկները, հակափաստարկները, ապացուցում իրենց իրավացիությունը, ցուցադրում հռետորական արվեստը: Դեբատն սկսվում է որոշակի դրույթի առաջադրումից: Դեբատի ժամանակ թեման ձևակերպվում է որպես պնդում: Դասարանը բաժանվում է երկու բանավիճող խմբերի, որոնցից մեկը պետք է պաշտպանի, ասենք, օրինակ «եկեղեցական ամենանշանավոր տոնը Վարդավառն է» դրույթը (թեզը), իսկ մյուսը՝ քննադատի: Դասարանը 2 մասի կարելի է բաժանել ինչպես աշակերտների ցանկությամբ, այնպես էլ պատահական ընտրությամբ: Երկրորդ դեպքում հնարավոր է, որ քննարկվող հարցի դեմ արտահայտվող աշակերտը հայտնվի իր դիրքորոշման հակառակորդների կողմում: Դա միանգամայն ընդունելի է, որովհետև շատ դեպքերում կարևոր է սեփական ընդդիմախոսի դերում հայտնվելը՝ վերջինիս դիրքորոշումն ավելի լավ հասկանալու համար: Քննարկումն ընթանամ է դեբատի նախատեսված ժամակարգի համապատասխան՝ քայլերի հետևյալ հաջորդականությամբ՝

- *Կողմ արտահայտվող (պնդումը պաշտպանող) թիմը (այսինքն՝ 1-ին թիմը) ներկայացնում է իր փաստարկները.*
- *Ընդդիմախոս խումբը ասվածի շուրջ հարցեր է տալիս՝ փորձելով ցույց տալ, որ նրանց փաստարկները հիմնավոր չեն.*
- *1-ին խումբը պատասխանում է հարցերին:*
- *2-րդ խումբը ներկայացնում է դրույթի մասին իր փաստարկները:*
- *1-ին խումբը ասվածի շուրջ հարցեր է տալիս 2-րդ խմբին:*
- *2-րդ խումբը պատասխանում է հարցերին:*
- *2-րդ խումբը ներկայացնում է իր հակափաստարկները և ապացույցները մեջբերումներ, փաստեր, վիճակագրական տվյալներ և այլն):*
- *1-ին թիմը ներկայացնում է իր հակափաստարկները և ապացույցները:*

Դեբատի այս փուլը, որի ընթացքում մի խմբի ընդդիմախոս- բանախոսը հարց է տալիս, իսկ մյուս խմբի ընդդիմախոս-բանախոսը պատասխանում է, անվանում են «հանդիպակաց փուլ»:

Խմբի բոլոր անդամների մասնակցությունն ապահովելու համար ուսուցիչը դեբատում ընդգրկված աշակերտների մեջ դերի բաժանում է կատարում.

- ***վարող.*** *պահպանում է կարգուկանոնը, ներկայացնում է բանավեճի թեման, մասնակիցներին ու նրանց դերերը,*
- ***բանավիճող.*** *ներկայացնում է խմբի փաստարկները և ապացույցները,*
- ***հարցեր տվող.*** *ներկայացված հարցերի շուրջ հարցեր է տալիս,*
- **հարցերին պատասխանող (բանախոս).** պատասխանում է ընդդիմախոս խմբի հարցերին
- **հակափաստարկներ ներկայացնող.** ներկայացնում է հակափաստարկները,
- **ամփոփող.** ներկայացնում է իր խմբի ամփոփիչ տեսակետը,
- **գնահատողներ**. ընդգրկված չեն խմբի մեջ, լսում են թեմայի վերաբերյալ երկու կողմերի փաստարկները և արձանագրում, նշում առավելությունները, թույլ կողմերը և գնահատում:

4) Աշխատանք դասագրքով

Սա ուսուցման կարևոր մեթոդներից մեկն է: Այս մեթոդի գլխավոր առավելությունն այն է, որ սովորողը ցանկացած ժամանակ իրեն հատուկ տեմպով նորից ու նորից կարող է կարդալ ուսումնական նյութը: Դասագրքով աշխատանքը կարող է կազմակերպվել ինչպես ուսուցչի անմիջական ղեկավարությամբ, այնպես էլ որպես սովորողի ինքնուրույն աշխատանք դասագրքի տեքստի շուրջ: Այս մեթոդի շնորհիվ կարելի է իրականացնել երկու խնդիր. սովորողները յուրացնում են ուսումնական նյութը և կուտակում տեքստային աշխատանքի փորձ, սովորում են աշխատել տարբեր բնույթի տպագիր աղբյուրներով: «Իմ հայրենիքը» առարկայի դասերին ուսուցիչը կարող է կիրառել տեքստային աշխատանքի հետևյալ ձևերը.

Կոնսպեկտավորում՝ կարճ գրառում, կարդացածի բովանդակության հակիրճ կամ համառոտ շարադրանք: Կոնսպեկտավորումը նախընտրելի է կատարել առաջին դեմ-

քով: Ցանկալի է կոնսպեկտավորել պատմողական, նկարագրական տեքստերը, ասենք օրինակ՝ Դաս 30. Էպոսի ճյուղերը: Սանասար և Բաղդասար:

Թեզիսների կազմում: Սա հիմնական մտքերի հակիրճ շարադրանքն է որոշակի հաջորդականությամբ: Օրինակ՝ Դաս 23-24. «Քրիստոնեական եկեղեցու խորհուրդները» դասի տեքստի հիմնական մտքերի հակիրճ ձևակերպում:

Պլանի կազմում: Տեքստը կարդալուց հետո կարող է հանձնարարվել յուրաքանչյուր ենթավերնագրիի կամ հատվածի համար նոր վերնագիր ընտրել: Տեքստի հետ աշխատանքի հետաքրքիր ձևեր են նաև մեջբերումը, գրախոսումը, զեկուցումը, ծանոթագրումը, տեղեկանքի կազմումը և այլն:

5) Աշխատանք սկզբնաղբյուրներով

«Իմ հայրենիքը» առարկայի դասավանդման լավագույն մեթոդներից է սկզբնաղբյուրով աշխատանքի մեթոդը, որը կարևոր միջոց է ուսուցումն ավելի արդյունավետ և ուշագրավ դարձնելու համար: Սկզբնաղբյուրում մշտապես առկա են տարաձայնություններ, հակասություններ տարբեր իրողությունների ու խնդիրների շուրջ: Այս հանգամանքը սկզբնաղբյուրը դարձնում է ուսուցման գործընթացը խթանող միջոց: Սկզբնաղբյուրով աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին ոչ միայն տեղեկանալու հակասություններին ու տարաձայնություններին, այլև մասնակցելու դրանց քննարկմանը և ամբողջական պատկերացում կազմելու այդ հարցի մասին: Սկզբնաղբյուրները կարևոր են աշակերտների գիտելիքների, վերլուծական կարողությունների և հմտությունների զարգացման համար: Ուղղակիորեն առնչվելով սկզբնաղբյուրի նյութին՝ աշակերտն ստանում է զարմանալու, հարցադրումներ անելու, բացատրելու և մեկնաբանելու հնարավորություն: Սկզբնաղբյուրներն ուշագրավ գաղափարների շտեմարան են, որտեղ նյութերը կաղապարված և հարմարեցված չեն:

Դասարանում սկզբնաղբյուրով աշխատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքի կազմակերպման ձևը, այսինքն՝ ինչպես օգտագործել սկզբնաղբյուրը (քննարկում կազմակերպել նրա շուրջ, գրավոր աշխատանք հանձնարարել, բանավոր ներկայացնել, թե դարձնել դերերով խաղի թեմա), ինչպես աշխատել (անհատական և փոքր խմբերով), ինչպես ներկայացնել կատարված աշխատանքը (հարցաթերթիկ, ակնարկ, նկար, ցուցապաստառ, բանավոր խոսք և այլն), ինչպես գնահատել աշակերտներին (թեստ, ռուբրիկ և այլն):

Սկզբնաղբյուրներով աշխատանքի և դրանց ներկայացման ձևերը

1. <u>Ամենատարածված ձևը փաստաթղթի վերաբերյալ հարցեր տալն է: Հարցեր կարելի է տալ երկու ձևով</u>.

ա) կարելի է նախնական հարցեր ձևակերպել և առաջարկել այդ հարցերի պատասխանները գտնել սկզբնաղբյուրում,

բ) կարելի է աշակերտներին առաջարկել թեստային հարցեր, որոնց նրանք պետք է պատասխանեն սկզբնաղբյուրին ծանոթանալուց հետո:

2. Սկզբնաղբյուրի վերլուծություն հարցաթերթիկի օգնությամբ.

ա) Նշեք սկզբնաղբյուրի տեսակը:
բ) Ո՞վ է հեղինակ(ներ)ը:
գ) Ո՞ւմ է ուղղված սկզբնաղբյուրը:
դ) Նշեք 3 խնդիր, որոնք կարևորվում են սկզբնաղբյուրում: Ինչ նպատակով է ստեղծվել սկզբնաղբյուրը:
ե) Սկզբնաղբյուրի ո՞ր հատվածներից եք բխեցնում նախորդ կետի ձեր պատասխանները: Մեջբերեք:
զ) Նշեք սկզբնաղբյուրի 2-3 խնդիր, որոնք կարևոր են ու արդիական:
է) Մեկ-երկու հարց ուղղեք սկզբնաղբյուրի հեղինակներին:

3. Սկզբնաղբյուրով աշխատանքը ներկայացնելու համար առաջարկվում է

ա) Գրել ակնարկ սկզրնաղբյուրի մասին:
Աշակերտները գրում են սկզբնաղբյուրի հիմնական գաղափարի, այդ գաղափարը հիմնավորող փաստարկների համոզիչ լինելու մասին: Ակնարկում պետք է գրեն նաև այն զգացմունքների ու զգացումների մասին, որոնք առաջացել են սկզբնաղբյուրը ընթերցելիս (ինչ զգացումներ առաջացրեց և ինչ տպավորություն գործեց սկզբնաղբյուրը: Անհրաժեշտ է ակնարկում վերլուծել սկզբնաղբյուրը:
բ) Գրել պատասխան սկզբնաղբյուրի հեղինակին՝ իրեն պատկերացնելով որպես այդ ժամանակաշրջանի մարդ:
գ) Սկզբնաղբյուրով աշխատանքը ներկայացնել բանավոր: Այս դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել դերերով խաղի և բանավեճի մեթոդները, որոնք ավելի արդյունավետ են, եթե աշակերտներն աշխատում են մեկից ավելի սկզբնաղբյուրով:
դ) Սկզբնաղբյուրը ներկայացնել պատկերային ձևով՝ պատրաստել նկարներ, ծաղրանկարներ, պաստառներ, բեմականացված ներկայացումներ:

6) Խճանկար

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է, որը կարելի է հաջողությամբ կիրառել հայրենագիտության դասերին: Այս մեթոդը հնարավորություն է տալիս աշակերտներին խորամուխ լինելու ուսումնական նյութի (թեմայի) որոշակի հատվածի (ենթաթեմայի), որոշակի հիմնահարցի մեջ և դրանք սովորեցնել իրենց դասընկերներին: Խճանկարի մեթոդով կազմակերպված դասը բաղկացած է հետևյալ հաջորդական փուլերից: Դասարանը բաժանվում է 4-5 հոգանոց հենակետային խմբերի: Բաժանումը կատարվում է 1-5-ը հաշվելու միջոցով: Ցանկալի է, որ խմբերում ընդգրկված լինեն տարբեր առաջադիմությամբ աշակերտներ: Խմբերի ձևավորումից հետո կատարվում է խումբ ձևավորող վարժություն, որից հետո մշակվում են խմբային աշխատանքի կանոններ: Կանոններն ընդունելուց և հաստատելուց հետո ուսուցիչը հայտնում է դասի թեման և ձևակերպում առաջադրանքը: Հենակետային խմբի անդամները միմյանց օգնելով՝ ընթերցում են ամբողջ նյութը, ապա քննարկում բարդ և անհասկանալի հատվածներն ու հասկացություն-

ները: Ուսումնական նյութին (թեմային) ծանոթանալուց հետո այն բաժանվում է առանձին հատվածների (ենթաթեմաների): Ապա հենակետային խմբերի յուրաքանչյուր անդամ որպես առաջադրանք ստանում է փորձագիտական թերթիկ ուսուցանվող նյութի որևէ հատվածի ուսումնասիրման համար: Խմբի անդամները դառնում են փորձագետներ և սկսում են ուսումնասիրել իրենց ենթաթեման, դրա վերաբերյալ հավաքում են տարբեր նյութեր, տեղեկություններ, կարճ պատմություններ և այլն: Այնուհետև հենակետային խմբերի նույն համարը կրող փորձագետ մասնակիցները (որոնք աշխատում են նույն ենթահարցի վրա) միավորվում են նոր՝ փորձագիտական խմբերի մեջ: Փորձագիտական խմբի անդամները փոխանակում են իրենց նյութերը, համեմատում ու հաստատում դրանք, կատարում ճշտումներ: Փորձագետները մեծ չափով օգտվում են փորձագիտական թերթիկներից, որոնք օգնում են կենտրոնանալ հիմնական հարցերի վրա: Փորձագիտական խմբերում աշխատանքն ավարտելուց հետո աշակերտները վերադառնում են հենակետային խմբեր: Յուրաքանչյուր վարձագետ սովորեցնում է իր ենթաթեման, պարզում, թե որքանով են իր դասընկերները յուրացրել այն: Վերջում խումբը ընդհանրացնում է քննարկումների, աշխատանքների արդյունքները, միավորում և ամբողջացնում է իրենց գիտելիքները: Ամփոփիչ փուլում համագործակցային խմբերը ներկայացնում են թեման իրենց նախընտրած ձևով և պատասխանում ուսուցչի հարցերին: Այս քայլը հնարավորություն է տալիս միևնույն նյութն ամփոփել և գնահատել տարբեր տեսանկյուններից և մի քանի անգամ:

Աշխատանքն ավարտելուց հետո կատարվում է գնահատում: Գնահատվում են խմբային գործընթացը, փորձագիտական աշխատանքը:

Գ. Մեթոդական հնարներ

«Իմ հայրենիքը» առարկայի ուսուցման գործընթացում խորհուրդ է տրվում լայնորեն կիրառել հետևյալ մեթոդական հնարները.

1) Մտագրոհ (մտքերի տարափ), ուղեղային գրոհ

Մեթոդական այս հնարը մասնագետների զգալի մասը դասում է նաև ամբողջական մեթոդների շարքը: Մտքերի տարափը (մտագրոհը) խմբային աշխատանքի պարզ և արդյունավետ հնար է, որի գլխավոր գործառույթը մտքերի ազատ հոսքն է: Մտքերի տարափը խրախուսում է ուսումնասիրվող թեմային այս կամ այն կերպ առնչվող, աշակերտի մտքում ծագած բոլոր մտքերի, բառերի ազատ, անկաշկանդ և անսահմանափակ թվարկումը առանց որևէ մեկնաբանության կամ բացատրության:

«Մտքերի տարափը» կիրառվում է դասի սկզբում, որի նպատակն աշակերտների նախնական գիտելիքները վեր հանելն է՝ ինչ գիտեն նրանք կամ ինչ են ենթադրում տվյալ թեմայի, (նյութի) վերաբերյալ: Տվյալ դասի թեման կամ կարևոր խնդիրը ձևակերպվում է որպես վերնագիր և գրվում է գրատախտակին: Այնուհետև առաջարկվում է արտահայտել այդ թեմային առնչվող յուրաքանչյուր միտք, բառ, գաղափար: Ցանկալի է՝ նախօրոք դասարանին հայտնել «մտքերի տարափի» համար նախատեսված ժամանակը: Թվարկված բոլոր մտքերը գրառվում են:

Երբ այս մեթոդը կիրառվում է ամբողջ դասարանի մասնակցությամբ, գրանցումները գրատախտակին կամ ցուցապաստառին գրում է ուսուցիչը կամ աշակերտներից մեկը (մի քանիսը): Եթե դասարանը բաժանված է համագործակցային խմբերի, ապա յուրաքանչյուրն ինքն է գրանցում՝ ընտրելով գրառման ձևը. ասենք՝ պարզ թվարկմամբ, առանց վերլուծության, խմբավորում է գրանցումները թղթի տարբեր անկյուններում: Կենտրոնում գրում է թեման, խնդիրը, ապա դրա շուրջը շրջանաձև գրառելով՝ «հավաքում» է արտահայտված մտքերը: Այս դեպքում գրանցում է խմբի անդամներից մեկը, նա, ում այն հանձնարարվել է: Երբ ավարտվում են գրառման աշխատանքները, խմբերն արդյունքները ներկայացնում են ողջ դասարանին: Դրանք պարզապես ընթերցվում են բոլորի համար, ապա գրանցումներով թղթերը փակցվում են դասարանի պատերին՝ մինչև դրանց վերլուծությանն անցնելը: Դասի ավարտին, երբ աշակերտներն արդեն ուսումնասիրել և յուրացրել են թեման (ուսումնական նյութը), անպայման անդրադառնում են մտագրոհի արդյունքներին՝ վերլուծելով, ճշգրտելով, ուղղելով, լրացնելով ու ամբողջացնելով նախնական գիտելիքների ցանկը:

Մտագրոհ

ԴԱՍ 8. Զինանշաններ և դրոշներ՝ ժամանակակից և պատմական



2) Խմբավորում

Խմբավորման հնարը նմանվում է «մտքերի տարափի» և օգնում է աշակերտներին ազատ ու անկաշկանդ մտածել որեէ թեմայի շուրջ: Այն իր կառուցվածքով հնարավորություն է տալիս մեծ ծավալով մտքեր, գաղափարներ կուտակելու, այնուհետև վերլուծելու, գտնելու, բացահայտելու դրանց միջև գոյություն ունեցող կապերը: Խմբավորումը կարելի է կիրառել դասի տարբեր փուլերում, հատկապես սկզբում կամ թեմայի ամփոփման ժամանակ (որպես սովորածը ի մի բերելու, նոր զուգորդումներ կատարելու կամ նոր պատկերացումները գրաֆիկորեն արտահայտելու միջոց): Խմբավորումը գրավոր վարժություն է, որի շնորհիվ կատարողը հնարավորություն է ստանում պատկերավոր դարձնելու իր մտքերը, տեղեկանալու իր իսկ ունեցած գիտելիքների և դրանց միջև կապերի մասին:

Խմբավորումը կատարվում է հետևյալ քայլերի հաջորդականությամբ: Ուսուցիչը գրատախտակի կամ ցուցապաստառի կենտրոնում գրում է դասի թեման կամ այդ թեմայի բառ-բանալին (հիմնաբառը): Նույնը կատարում են աշակերտները՝ իրենց տետրերում կամ թղթի վրա: Այնուհետև տրվում է առաջադրանք՝ գրել թեմային առնչվող բառեր ու արտահայտություններ: Պետք է անդադար գրի առնել միտքը եկած բոլոր բառերն ու գաղափարները՝ առանց սահմանափակության, առանց մտածելու դրանց ճիշտ կամ սխալ լինելու մասին: Այնուհետև աշակերտները պետք է գծերով միացնեն այն բառերը, որոնք, նրանց կարծիքով, ինչ-որ կերպ առնչվում են միմյանց հետ: Աշխատանքն ավարտելաց հետո կարելի է ականատես լինել ուշագրավ պատկերների խայտաբղետության: Ձևավորված այդ սխեմատիկ պատկերներն իրենց հերթին դառնում են նոր մտքերի ու գաղափարների, դրանց միջև գոյություն ունեցող կապերի ստեղծման աղբյուր:

ԴԱՍ 15. Ավանդապատումներ տեղանքի հետ կապված (Ծիծեռնակաբերդ, Հաղպատ, Զանգեզուր, Ծաղկաձոր)



3) Գրաֆիկական կազմակերպիչ (գծագրական դասակարգիչ)

Գրաֆիկական կազմակերպիչը մեթոդական այն արդյունավետ հնարն է, որն ուսումնական նյութի պատկերավորման միջոցով ակնառու է դարձնում մտածողության ընթացքը: Հայրենագիտության դասերին արդյունավետության տեսակետից չափազանց կարևոր են հասկացությունների աղյուսակները, T-աձև, m-աձև աղյուսակները, հասկացությունների քարտեզը, պրիզման, վենի դիագրամը, տարբեր բնույթի սխեմաներ և այլն:

Հասկացությունների աղյուսակը կուտակված տեղեկատվությունը դասակարգելու, տեղաբաշխելու, հասկացությունները համեմատելու և համակարգելու արդյունավետ միջոց է: Այն հատկապես օգտակար է, երբ համեմատվում են երեք և ավելի հասկացություններ: Աղյուսակը կազմվում է համեմատվող հասկացություններից յուրաքանչյուրին մեկ տող, իսկ դրանց համեմատման հատկանիշներին՝ մեկական սյունակ տրամադրելու միջոցով: Հասկացությունների աղյուսակը կարելի է կազմել անհատապես և խմբերով:

3.1 Հասկացությունների աղյուսակ

ԴԱՍ 39. «Սասունցի Դավիթ» Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

1	**Արժեքներ**	**Դրսևորումները էպոսում**
2	հայրենասիրություն	
3	ազատություն	
4	հավատք	
5	աշխատանք	
6	հարգանք մեծերի նկատմամբ	
7	հյուրընկալություն	
8	այլ արժեքներ	

3.2 T-աձև աղյուսակ: Այս աղյուսակն օգտագործվում է միևնույն հասկացության կամ խնդրի երկու հատկությունները համեմատելու համար: T-աձև աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր հատկանիշները, դրական կամ բացասական առանձնահատկությունները: Այս աղյուսակը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների՝ այո/ոչ կամ համադրություն/հակադրություն արտահայտող արձագանքները գրառելու համար: Այս աղյուսակը նույնպես կարելի է կիրառել դասի տարբեր փուլերում, անհատապես կամ խմբով աշխատելիս:

Т-աձև աղյուսակ

ԴԱՍ 13. Հայ ժողովրդի ծագման ավանդապատումները



m-աձև աղյուսակ: Սա Т-աձև աղյուսակի մեկ այլ տարբերակ է, որը միևնույն հասկացության կամ խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունքի դիրքորոշման (դրական, բացասական, չեզոք) արտահայտման կարևոր միջոց է: Սա 3 բաժնից կազմված աղյուսակ է, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության խնդրի վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք դիրքորոշումները, նշվում են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: m-աձև աղյուսակը բավական արդյունավետ է դասի տարբեր փուլերում և կարող է գործածվել թե՛ անհատական աշխատանքի և թե՛ խմբային քննարկումների ժամանակ:

3.3. m-աձև աղյուսակ

ԴԱՍ 22. Աստվածաշնչյան առակներ, նորկտակարանային պատմություններ



3.4. Հասկացությունների քարտեզ: Մեթոդական այս հնարը հայտնի է նաև «գաղափարների քարտեզ», «հասկացությունների քարտեզագրում» անվանումներով: Հասկացությունների քարտեզը կազմվում է հետևյալ կերպ, նախ շրջանի մեջ են առնվում թեման, գաղափարը կամ հասկացությունը, օրինակ՝ «Իմ հայրենիքը Հայաստանն է», այնուհետև «հայրենիք» հասկացության շուրջ գրում են ուղեկից բառեր, ասենք, «տարածք և սահմաններ», «բնակլիմայական պայմաններ», «բուսական ու կենդանական աշխարհներ» և այլն: Ապա նույն կերպ գրառվում են «պետություն» հասկացությանն

առնչվող բառերն ու գաղափարները, օրինակ՝ բանակ, թագավորություն, վարչական բաժանում, արքունիք և այլն: Քարտեզի ճյուղերը տարածվում են նաև յուրաքանչյուր ուղեկից բառից դուրս բխելով: Ճյուղավորումների քանակը և բազմազանությունը կախված են նյութի ուսումնասիրման խորությունից և հետաքրքրությունների շրջանակից: Յուրաքանչյուր բառ գծիկով միանում է «ծնող» բառին, իսկ միևնույն «ծնողն» ունեցող բառերը վերցվում են շրջանի մեջ՝ որպես ուսումնասիրման մեկ ոլորտ: Քարտեզագրման ընթացքում, երբ ստացվում է առավելագույն բազմաճյուղ պատկեր, օգտագործում են պայմանական նշաններ, ինչպես արվում է քարտեզ կազմելիս: Քարտեզի վրա ընդգծվում են այն գաղափարները, որոնց շուրջ անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություններ հավաքել: Հարցական նշաններ են դրվում այն գաղափարների մոտ, որոնք ճշգրտման կարիք ունեն: Հաստատական որևէ նշան է դրվում այն բառերի կամ հասկացությունների մոտ, որոնց ուսումնասիրումը համարվում է ավարտված: Որոշակի նշաններով առանձնացվում են առավել ուշագրավ գաղափարները: Արդյունքում ստացվում է մի պատկեր, որին հաջորդում է գաղափարների նպատակային ուսումնասիրությունը:

Հասկացությունների քարտեզ

ԴԱՍ 1. Ես իմ փոքր հայրենիքում



3.5. Վենի դիագրամը կառուցվում է երկու և ավելի շրջանաձև պատկերի միջոցով, որոնք ունեն հատման ընդհանուր մակերես: Այս դիագրամն օգտագործվում է գաղափարները, հասկացությունները, դեպքերն ու երևույթները հակադրելու, դրանց նմանությունները և տարբերությունները ցույց տալու համար: Շատ հաճախ դեպքերի և երևույթների ընդհանրությունները և առանձնահատկությունները նշելիս պահանջվում է գրառել ծավալուն նյութ, որը չի տեղավորվում շրջանագծերի համապատասխան մասերում: Այդպիսի դեպքերում Վենի դիագրամը փոքր-ինչ այլ պատկեր է ունենում: Հնարավոր է՝

Վենի դիագրամն ունենա ինչպես պարզ (երկու հասկացություն կամ երևույթ համեմատելու համար), այնպես էլ բարդ կառուցվածք (3-4 հասկացություն կամ երևույթ համեմատելու համար): Վենի դիագրամն օգտագործվում է հիմնականում դասի ամփոփիչ փուլում և նախատեսվում է անհատական կամ խմբային աշխատանքի համար:

Վենի դիագրամ 1

ԴԱՍ 27. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և սուրբ Մեսրոպ Մաշտոց



Վենդիագրամ 2

ԴԱՍ 1. Ես իմ փոքր հայրենիքում



3.6. Պրիզման «Իմ հայրենիքը» առարկայի դասավանդման մեջ կիրառվող պարզ և հետաքրքիր մեթոդական հնար է, որը մտածողության ընթացքը դարձնում է պատկերավոր ու շոշափելի: Պրիզմայի հիմնական նպատակն է ենթագիտակցական ոլորտում եղած զուգորդական կապերը վեր հանելն ու արձանագրելը: Պրիզման կիրառվում է դասի սկզբնական փուլում աշակերտների ակտիվությունն ու հետաքրքրությունը խթանելու նպատակով: Ուսուցիչը որպես մեկնաբառ տալիս է այն հիմնական հասկացությունը, միտքը, թեման, որ պետք է ուսումնասիրվի տվյալ դասի ընթացքում: Մեկնաբառը գրում են ուղղանկյուն վանդակում: Սխեմայի հաջորդ երկու վանդակներում, առանց քննարկման, գրում են մեկնաբառի ազդեցությամբ աշակերտների մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը: Պետք է հիշել, որ խմբային աշխատանքի ժամանակ գրանցվում են ասված առաջին բառերը: Զուգորդական մտածողության վրա հիմնվող այս աշխատանքը շարունակվում է մինչև վերջ: Առավել արդյունավետ է երեք շերտով բացված պրիզման, որից հետո սկսվում է պրիզմայի փակումը: Այս անգամ վանդակները լրացվում են նախորդ երկու բառերի զուգորդական կապը հաշվի առնելով: Պրիզման եզրափակվում է վերջնաբառով: Պրիզմայի ամփոփիչ քայլը մեկնաբառի և վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է, որը պետք է արտահայտվի մեկ նախադասության կամ մտքի մեջ: Այդ միտքը կամ նախադասությունը կարելի է օգտագործել հետագայում նյութի ամփոփման ժամանակ:

ԴԱՍ 29. «Սասունցի Դավիթ» էպոսը



3.7. Խորանարդում

Խորանարդում մեթոդական հնարն օգնում է աշակերտներին ուսուցանվող հարցը դիտարկելու տարբեր տեսանկյուններից և զարգացնում է նրանց մտածողությունը: Մեթոդական այս հնարը շատ օգտակար է կիրառել հատկապես հասկացությունների ուսումնասիրման ժամանակ: Խորանարդումը կարելի է կիրառել խմբային, թիմային քննարկումների ժամանակ, ինչպես նաև աշակերտներին հանձնարարել որպես անհատական աշխատանք: Մեթոդական այս հնարը կարելի է կիրառել թե՛ դասի սկզբնական, թե՛ ամփոփման փուլում: Խորանարդումը կիրառելու համար անհրաժեշտ է ունենալ ստվարաթղթե խորանարդ (կողի 15-20 սմ երկարությամբ), որի նիստերից յուրաքանչյուրի վրա գրվում են հետևյալ առաջադրանքները՝

- *նկարագրիր,*
- *համեմատիր,*
- *գուգորդիր-վերլուծիր-կիրառիր,*
- *կողմ և դեմ փաստարկներ բեր:*

Մեկական խորանարդներ պետք է ունենան ինչպես առանձին խմբերը, այնպես էլ ամեն մի աշակերտ: Սկզբում անհրաժեշտ է ներկայացնել «թիրախ» հասկացությունը (օրինակ՝ մշակույթ հասկացությունը) կամ ձևակերպել առաջադրանքը: Ուսուցիչն այն

գրում է գրատախտակին: Հարկ է նշել, որ թեման կամ հասկացությունը ծանոթ պետք է լինի աշակերտին: Նախապես կազմակերպվում է տրված առաջադրանքի քննարկում ընդհանուր գծերով, որից հետո ցուցում է տրվում աշխատել ըստ խորանարդի նիստերին արված նշումների: Աշակերտները կամ խմբերը ուսումնասիրում և նկարագրում են հասկացությունը, ապա համեմատում (ինչի է նման, ինչից է տարբերվում), զուգորդում (ինչ է հիշեցնում կամ ստիպում մտածել հասկացությունը, և ինչ մտքեր են ծագում դրա հետ կապված), վերլուծում (ինչ կառուցվածք ունի հասկացությունը, ինչ տարրերից և հատկանիշներից է այն բաղկացած), կիրառում (ինչ գործնական նշանակություն ունի, և ինչպես կարելի է օգտագործել այն), փաստարկում (տարբեր տեսանկյունից է ներկայացնում հասկացությունը, ինչպես նաև իր տեսակետը պաշտպանում տարբեր փաստարկներով): Աշխատանքն ավարտելուց հետո աշակերտները միմյանց ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը՝ ըստ խորանարդի նիստերից յուրաքանչյուրի հանձնարարության: Յուրաքանչյուր աշակերտ իր աշխատանքը ներկայացնելուց հետո պատասխանում է դասընկերների հարցերին: Այնուհետև ամբողջ խումբն է հաջորդաբար անդրադառնում խորանարդի բոլոր նիստերին և ներկայացնում տարբերակները:

ԴԱՍ 9-10. Մշակույթ և կենցաղ: Ազգային խոհանոց

3.8. Քառաբաժան

Քառաբաժանը մեթոդական հնար է, որը կարելի է կիրառել ուսումնական նյութով աշխատելու ընթացքում: Այն արդյունավետ կարող է գործել և՛ մեծ ու փոքր խմբերով, և՛ անհատական աշխատանքի ժամանակ: Անհատական աշխատանքի դեպքում զույգերն իրենց գրառումները ներկայացնում են միմյանց, ապա՝ խմբին: Զույգի կամ խմբի ընտրությամբ աշխատանքը ներկայացվում է նաև ողջ դասարանին: Քանի որ հնարավոր է ուսումնական նյութի դիտարկումը որոշակի տեսանկյունով, ուստի հարկ կլինի ուշադրություն դարձնել քառաբաժանի այս կամ այն հատվածի գրառումներին, որոնք հստակ պետք է առանձնացնել, քննարկել, վերլուծել ու ներկայացնել: Անհրաժեշտ է մաքուր թուղթ կամ գրատախտակ, որը պետք է բաժանել չորս մասի (այստեղից էլ՝ մեթոդի անվանումը): Բաժիններից յուրաքանչյուրի համար նախատեսված են տեքստին առնչվող հանձնարարություններ, որոնք ընտրված են տվյալ շարադրանքի ընկալման և մտքի զարգացման ընթացքին համապատասխան: Տեքստի ուսումնասիրման ընթացքում լրացվում են բոլոր բաժինները: Ուսուցչին օգնելու համար ներկայացվում է քառաբաժան աղյուսակի երկու ձև:

ԴԱՍ 17. Ավանդույթներ, ծեսեր, եկեղեցական տոներ (Սուրբ Ծնունդ, Սուրբ Սարգիս)

1. Ի՞նչ էիք տեսնում տեքստը կարդալիս: Զգայություններ. • տեսողական՝ • լսողական • զգացողական • համի և հոտի	2. Ի՞նչ էիք զգում տեքստը կարդալիս: Վերաբերմունք. • հույզեր • զգացմունքներ
3. Կապը ձեր և իրական կյանքի հետ: • ասոցիացիաներ • առնչություններ • օրինակներ	4. Նոր վերնագիր: • ընդհանրացում • վերաիմաստավորում • գնահատում

4) Աշխատանք փոքր խմբերով

Քանի որ այսօր «Իմ հայրենիքը» առարկայի (և ոչ միայն) ուսուցման գործընթացում վճռական տեղ է հատկացվում փոքր խմբերով աշխատանքին, ուստի անհրաժեշտ է համարվում խոսել այդ խմբերի ձևավորման սկզբունքների, տեսակների, մեծության և այլ հարցերի մասին: Փոքր խմբերով աշխատանքն ուսուցման կազմակերպման ձև է, որն աշակերտներին հնարավորություն է տալիս փոխանակելու իրենց գիտելիքները և փորձը և համատեղ խնդիրներ լուծել: Փոքր խմբերով աշխատանքը մեծապես մեծացնում է աշակերտների ակտիվությունը և մասնակցությունը դասին: Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարանում աշակերտների խտության ավելացման

հետևանքով զգալիորեն դժվարանում է ուսուցման ընդհանուր և անհատական հարցման ձևերի կիրառումը: Բացի այդ՝ եթե ուսուցիչն աշխատում է դասարանի (մեծ խմբերի) հետ, ապա աշակերտները արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություն են ունենում, քան փոքր խմբերի դեպքում:

Դասարանը (մեծ խումբը) փոքր խմբերի է բաժանվում աշխատանքի սկզբում, իսկ ընթացքում խմբերում թույլատրվում են փոփոխություններ: Խմբերը ձևավորվում են տարբեր ձևերով՝ պատահական ընտրությամբ, ըստ հետաքրքրությունների կամ ինքնակամ, ուսուցչի ցուցումով: Պատահական է համարվում այն խումբը, որը ձևավորվում է հաշվելով (օրինակ՝ եթե դասարանը պետք է բաժանվի 4 խմբի, աշակերտները կանգնում են շրջանով և հաշվում են 1-4-ը, որից հետո հանձնարարվում է «մեկերին» կազմել մեկ խումբ, «երկուսներին»՝ մյուս խումբը, և այլն), քարտերի կամ կտրտված բացիկների եղանակով (օրինակ՝ եթե դասարանը երեք խմբի է բաժանվելու, պետք է պատրաստել աշակերտների թվով երեք գույնի քարտեր՝ հավասար քանակությամբ), ըստ նմանությունների կամ տարբերությունների (օրինակ՝ ըստ ծննդյան ամիսների կամ տարվա եղանակի, սիրած մարզաձևի, հագուստի գույնի և այլն), երկրաչափական պատկերներով (օրինակ՝ եթե դասարանը 4 խմբի պետք է բաժանվի, ապա պատրաստում են 4 տեսակի երկրաչափական պատկերներ, որոնք դրվում են սեղանին, և յուրաքանչյուր աշակերտ վերցնում է դրանցից մեկը: Նույնանման պատկերներ վերցրած աշակերտները դառնում են մեկ խմբի անդամ):

Ըստ հետաքրքրությունների խմբերի ձևավորման համար աշակերտներին առաջարկվում են մի քանի ուշագրավ թեմաներ կամ խնդիրներ: Նրանք համախմբվում են իրենց հետաքրքրող թեմայի կամ խնդրի շուրջ: Խումբը ձևավորվում է ինքնակամ, երբ աշակերտներն են ընտրում իրենց խմբի անդամներին: Ուսուցչի ընտրությամբ խմբերը ձևավորվում են՝ ըստ նախապես կազմած նրա ցուցակի այնպես, որ առաջին տեղում լինի ամենաուժեղ աշակերտը, երկրորդում՝ նրան հավասար կամ քիչ զիջող, և այսպես նվազման կարգով ցուցակը շարունակվում է, վերջում նշվում է ամենաթույլ աշակերտի անունը: Առաջին խմբի կազմում ընդգրկվում են առաջինն ու վերջինը, ինչպես նաև երկու հոգի ցուցակի միջին մասից: Նույն ձևով կազմվում են նաև մյուս խմբերը:

Խմբերը լինում են համասեռ և տարասեռ: Համասեռն այն խմբերն են, որտեղ ընդգրկված են նույնանման կարողություններ ունեցող աշակերտներ: Տարասեռ են համարվում այն խմբերը, որտեղ ընդգրկված են տարբեր՝ ուժեղ կամ թույլ կարողությունների տեր աշակերտներ: Խմբում ընդգրկվում են 3-8 աշակերտներ, բայց առավել ամենաարդյունավետ են 4 հոգուց բաղկացած տարասեռ խմբերը:

Փոքր խմբերով աշխատանքը պահանջում է աշակերտների ոչ սովորական դասավորվածություն: Դրանք շարվում են շրջանաձև, Բ-աձև, եղևնաձև այնպես, որ հնարավորություն կտան յուրաքանչյուր աշակերտի տեսնելու իր խմբի բոլոր անդամներին: Փոքր խմբերով աշխատանքը կապահովի բարձր արդյունք, եթե կիրառվեն խմբային աշխատանքի տարբեր ձևեր, հնարներ, վարժություններ: Խմբային աշխատանքի ձևերն ու հնարները յուրաքանչյուր մասնակցին խմբում ներգրավելու եղանակ են, որոնք ապահովում են լսելուն, խոսելուն, համեմատելուն, ձնափոխելուն, ստեղծելուն և այլ աշխատանքներին նրա մասնակցությունը: «Իմ հայրենիքը» առարկան դասավանդող ուսուցչի համար օգտակար կլինի իմանալ և կիրառել դրանցից մի քանիսը:

- **Մտածիր-զույգ կազմիր-քննարկիր** մեթոդական հնարը խմբային աշխատանքի բավական պարզ և մատչելի միջոց է, որն ընթանում է 3 փուլով: Սկզբում աշակերտներն անհատապես աշխատում են առաջադրված որևէ հարցի շուրջ: Հաջորդ փուլում նրանք զույգ են կազմում դասարանի աշակերտներից մեկի հետ, փոխանակում, քննարկում ու համեմատում իրենց տեսակետները: Վերջին՝ 3-րդ փուլում նրանք հնարավորություն են ստանում ամբողջ դասարանին ներկայացնելու իրենց մտքերն ու տեսակետները:

- **Ձայների շրջան** մեթոդով աշխատելիս բոլոր աշակերտներին հնարավորություն է տրվում խոսելու ըստ հերթականության: Աշակերտները 4-5 հոգով շրջան են կազմում, նրանց տրվում է ուսումնասիրվող թեման (հարցը) և մի քանի րոպե ժամանակ՝ տվյալ թեմայի (հարցի) շուրջ մտորելու համար: Երբ սկսվում է խմբային քննարկումը, յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն է տրվում թեմայի շուրջ խոսելու, որի ընթացքում ոչ ոք իրավունք չունի նրան միջամտելու: Երբ բոլորն արդեն խոսել են, շրջանները բացվում են՝ ընդհանուր՝ դասարանական քննարկման համար:

- **Փոփոխվող եռյակները** նույնպես խմբային աշխատանքի օգտակար հնար են: Այս դեպքում աշակերտները հնարավորություն են ստանում հերթով աշխատելու տարբեր դասընկերների հետ: Նախքան սկսելն անհրաժեշտ է ունենալ քննարկման համար նախատեսված հարցեր: Առաջին փուլում աշակերտները կազմում են եռյակներ և քննարկում իրենց տրված հարցը: Բոլորը հերթով խոսում են: Որոշ ժամանակ անց առաջարկվում է համարակալել եռյակները և վերամիավորվել նոր եռյակներով՝ արդեն ըստ համարի: Այս անգամ եռյակներին քննարկման համար տրվում են նոր՝ ավելի բարդ հարցեր: Կարելի է ըստ ցանկության փոփոխել եռյակները և քննարկման համար տալ նոր հարցեր:

- **Ձնակույտը** (բուրգեր) խմբային աշխատանքի արդյունավետ հնարներից է: Աշակերտներն սկզբում աշխատում են ինքնուրույն, հետո՝ զույգերով, ապա շարունակում են աշխատանքը 4-հոգանոց խմբում: Հնարավոր է նաև քննարկումը շարունակել 6-8-հոգանոց խմբերում: Սակայն ընդունված է, որ չորսով աշխատելուց հետո կազմակերպվի համադասարանական քննարկում:

Այս մեթոդով աշխատելիս պետք է ապահովել առաջադրանքի աստիճանական բարդացումը, որպեսզի յուրաքանչյուր հաջորդ փուլում քննարկումների ժամանակ նյութը չկրկնվի: Օրինակ՝ կարելի է աշակերտներին հանձնարարել թեմայի շուրջ հարցեր տալ միմյանց: Զույգերով աշխատելիս նրանք փորձում են պատասխանել միմյանց հարցերին, հետո միանում են այլ զույգի, որոնք ունեն նմանատիպ հարցեր, կազմում են քառյակներ: Համադասարանական քննարկման ժամանակ ամեն խմբից մեկը ներկայացնում է իր խմբի տեսակետը, կարծիքը և որոշումը:

- **Ուսումնական նվաճումներ** հնարը կիրառվում է դասախոսություն-խմբային աշխատանք-անհատական աշխատանք սխեմայով: Դասի սկզբում ուսուցիչը ներկայացնում է նոր նյութը, ապա աշակերտները խմբերում աշխատում են ըստ դասախոսության սղագրի՝ միմյանց օգնելով հասկանալ դրա բովանդակությունը, որից հետո կատարում են անհատական աշխատանք: Անհատական աշխատանքի փուլում աշակերտները չեն կարողանում օգնել միմյանց: Ուսուցիչը գնահատում է անհատական աշխատանքը:

- **Խմբային աջակցություն անհատական ուսուցմանը** հնարն ապահովում է աշակերտներին տվյալ թեման յուրացնելու անհատական տեմպով: Աշակերտներն աշխատում

են խմբում՝ կատարելով անհատական առաջադրանքներ: Այդ ընթացքում նրանք հարցեր են տալիս միմյանց, օգնում իրար՝ ստուգելու միմյանց աշխատանքները, շտկում սխալները: Աշակերտները պետք է ջանան, որպեսզի խումբը հնարավորինս արագ ավարտի առաջադրանքի կատարումը: Երբ խումբն ավարտում է աշխատանքը, ուսուցիչը նրանց տալիս է նոր թեմա ու առաջադրանք: Շաբաթվա վերջում հաշվարկվում է, թե քանի թեմա է սովորել յուրաքանչյուր խումբ: Առաջադրանքները գնահատում են ուսուցչի նշանակած աշակերտ-գնահատողները՝ ուսուցչի տված պատասխանների հարցաթերթիկներով:

Կարելի է կիրառել նաև խմբային աշխատանքի այնպիսի մեթոդներ և հնարներ, ինչպիսիք են՝ «ներքին ու արտաքին խմբեր», «գլուխ գլխի», «եռաստիճան հարցազրույց», «հարցերի ձևակերպում» և այլն:

5) Գնահատման համակարգը

1. Գնահատում

Հանրակրթական պետական չափորոշչում հատուկ տեղ են գրավում ուսումնառության արդյունքների գնահատմանը վերաբերող հարցերը: Հանրակրթական չափորոշչի համաձայն գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակության զարգացման աստիճանը՝ ըստ առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների մակարդակի: Գնահատումը ուսուցման արդյունքների չափման գործընթաց է: Այն որոշում է հանրակրթության պետական չափորոշչի հիման վրա կազմված առարկայական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի պահանջների կատարման մակարդակը: Կան գնահատման տարբեր ձևեր: Սակայն հանրակրթական ուսումնական հաստատություններում առաջնայինը միավորային գնահատումն է, որը իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում: Գնահատումը լինում է հայտորոշիչ, միավորային և ուսուցանող:

ա) Միավորային (քանակական) գնահատման համար կիրառվում է 10 միավորային սանդղակը: 10 միավորային սանդղակում որևէ թիվ չի հանդիսանում անբավարար գնահատական, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողությունը որևէ մակարդակում: Քանակական գնահատումը ցույց է տալիս աշակերտի ուսումնական հաջողությունները. սկսվում է 1 միավորից և չունի անբավարար նիշ:

բ) Ուսուցանող (ձևավորող) գնահատումը սովորողի ուսուցման առաջընթացն ապահովելու նպատակով տեղեկությունների հավաքման և արժևորման միջոցով ուսումնառության բարելավումն է: Ուսուցանող գնահատում է համարվում գնահատման ցանկացած գործողություն, որը կատարվում է սովորեցնելու և սովորելու ողջ ընթացքում, երբ ձեռք են բերվում տեղեկություններ սովորողների գիտելիքների ու հմտությունների վերաբերյալ: Այդ տեղեկություններն օգտագործվում են սովորեցնելու-սովորելու հետագա գործընթացը բարելավելու համար:

Ձևավորող գնահատման շրջափուլն ընթանում է այսպես.

Դասավանդում

(ուսուցիչը փոխանցում է գիտելիքներ)

↓

Ուսումնառություն

(սովորողները ձեռք են բերում գիտելիքներ)

↓

Ուսուցանող գնահատում

(խրախուսանք, գովասանք)

↓

Հետադարձ կապ

(ուսուցիչը պարզում է սովորելու ընթացքում սովորողների հաջողությունները, դժվարությունները, խոչընդոտները)

↓

Բարելավված ուսուցում

(սովորողներից ստացած արդյունքների վերլուծության հիման վրա կատարում է բարելավմանն ուղղված քայլեր)

2. Գնահատման սկզբունքները

Գնահատման համակարգը հիմնվում է հետևյալ սկգբունքների վրա՝

- հավաստիություն,
- արդարություն,
- հուսալիություն,
- անկողմնակալաթյուն,
- մատչելիություն,
- հիմնավորվածություն,
- համապատասխանելիություն,
- հաշվառելիություն,
- օբյեկտիվություն,
- թափանցիկություն:

3. Գնահատման գործառույթները.

- խթանող,
- կողմնորոշող,
- կարգավորող,
- վերահսկող,
- դասակարգող,
- սոցիալական,

4. Գնահատման միջոցները, գործիքները, մեթոդները

Գնահատման համար կիրառվում են հետևյալ մեթոդները կամ գործիքները՝
- բանավոր և գրավոր հարցում,
- առաջադրանքի կատարում,
- հարցարան,
- թեստ,
- գնահատման սանդղակաշար (ռուբրիկ),
- ուսումնական թղթապանակ,
- ստուգատես-ցուցադրություն և այլն:

5. «Իմ հայրենիքը» առարկայից սովորողների միավորային գնահատումը

Հանրակրթության պետական նոր չափորոշչով 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի կատարվում: Երկրորդ կիսամյակում կիրառվում են առարկայի միավորային (թվանշանային) գնահատման բաղադրիչների տեսակները.

ա) Բանավոր հարցում: Ստուգման այս տեսակը նպաստում է սովորողների բանավոր խոսքի, տրամաբանական մտածողության, նյութը ինքնուրույն ամփոփելու և վերարտադրելու կարողությունների զարգացմանը:

բ) Թեմատիկ գրավոր աշխատանքներ: Հանձնարարվում են ծրագրով նախատեսված թեմայի (թեմաների) յուրացման աստիճանը պարզելու համար:

Թեմատիկ գրավոր աշխատանք կարող են լինել՝

- Թեստը, որը ներառում է ընտրովի կամ կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ, համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ, ծավալուն պատասխանով առաջադրանքներ, շարադրանք կամ նկարագրություն պահանջող տրամաբանական, ստեղծագործական և ինքնուրույն հետազոտական առաջադրանքներ:
- Շարադրանքը, որը կարող է լինել հակիրճ՝ մեկ հարցով, և ընդարձակ՝ երկու և ավելի հարցերով:
- Հարցաշարը, որն ընդգրկում է թեմայի հիմնական բովանդակությունը:

գ) Գործնական աշխատանք

- Աշխատանք սկզբնաղբյուրներով և այլ փաստաթղթերով:
- Գծակարգերի կազմում:
- Աշխատանք քարտեզներով:

ԲԱԺԻՆ III. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ԹԵՄԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԴԱՍԻ ՊԼԱՆՆԵՐ

Նկատի ունենալով, որ այսօր ուսուցման գործընթացում մեծ տեղ է հատկացվում գիտելիքների աղբյուրների (սկզբնաղբյուր, փաստաթղթեր, վավերագրեր, գիտահանրամատչելի ու տեղեկատու գրքեր և այլն), զննական նյութերի (նկարազարդումներ, աղյուսակներ, գրաֆիկական պատկերներ և այլն) վրա անհատական ու փոքր խմբերով աշխատանքներին, ուսուցիչներին օգնելու նպատակով կազմվել են տարբեր բնույթի հուշաթերթիկներ ու հարցաթերթիկներ: Դրանք կարելի է օգտագործել բոլոր տիպի դասերի ժամանակ:

1) Սկզբնաղբյուրներով կատարվող աշխատանքի հարցեր

Սկզբնաղբյուրներով արդյունավետ աշխատելու և դրանք ճիշտ հասկանալու համար շատ կարևոր է սկզբնաղբյուրով աշխատելիս աշակերտների ուշադրությունը հրավիրել որոշ կողմնորոշիչ հարցերի վրա:

1. Ո՞վ (ովքեր) է սկզբնաղբյուրի հեղինակ(ներ)ը, ի՞նչ նպատակով է ստեղծել այն, և ո՞ւմ է ուղղված:
2. Արդյո՞ք սկզբնաղբյուրի հեղինակ(ներ)ը իրադարձությունների նկարագրության մասնակիցներ է (են), թե՞ ստեղծել է (են) ուրիշների տեսածների, ուրիշներից լսածների հիման վրա: Ե՞րբ է ստեղծվել սկզբնաղբյուրը:
3. Արդյո՞ք սկզբնաղբյուրի հեղինակ(ներ)ը չեզոք է, թե՞ ունի որոշակի շահագրգռվածություն, որն ազդել է նրա ստեղծածի վրա:
4. Սկզբնաղբյուրն ստեղծվել է անձնակա՞ն օգտագործման, փոքր խմբի՞, թե՞ մեծ լսարանի համար:
5. Սկզբնաղբյուրը պարզապես տեղեկացնո՞ղ է, թե՞ ունի նաև համոզելու նպատակ: Սկզբնաղբյուրի ոճի միջոցով պարզեք՝ հեղինակը փորձում է անաչա՞ռ լինել, թե՞ համոզել:
6. Արդյոք սկզբնաղբյուրի տեղեկությունները չափազանցվա՞ծ են, թե՞ նվազեցված են հեղինակի կողմից:
7. Ի՞նչ բառապաշար է օգտագործում հեղինակը սկզբնաղբյուրում:
8. Սկզբնաղբյուրը գրվել է իրադարձությունների ընթացքո՞ւմ, դրանցից անմիջապես հետո՞, թե՞ որոշակի ժամանակ անց:

Սկզբնաղբյուրներով աշխատանքի գնահատման հարցեր

1. Նշեք երեք խնդիր, որոնք կարևորվում են սկզբնաղբյուրում:
2. Նշեք սկզբնաղբյուրի երկու-երեք խնդիր, որոնք կարևոր են և արդիական:
3. Մեկ-երկու հարց ուղղեք սկզբնաղբյուրի հեղինակին:

Փաստաթղթերի վերլուծության հարցեր

1. Ի՞նչ փաստաթուղթ է սա: Ե՞րբ է այն ստեղծվել:
2. Ո՞վ (ովքեր կամ որ կառույցը, կազմակերպությունը հաստատությունը) է փաստաթղթի հեղինակը:
3. Ի՞նչ գիտեք նրա մասին:
4. Ձեր կարծիքով ո՞ւմ համար է փաստաթուղթը:
5. Ո՞րն է փաստաթղթի նպատակը:
6. Ի՞նչ անծանոթ բառեր կան փաստաթղթում: Ի՞նչ են դրանք նշանակում:
7. Անհասկանալի՞ է արդյոք փաստաթղթի որևէ մաս: Ինչո՞ւ:
8. Ո՞րն է ամենակարևոր տեղեկատվությունն այս փաստաթղթում:
9. Ինչո՞ւ է այս փաստաթուղթը կարևոր:
10. Նկարագրեք, թե ինչպես վերլուծեցիք փաստաթուղթը:

Ֆիլմի վերլուծություն

Ֆիլմի վերնագիրը

Մինչև ֆիլմը դիտելը

Դատելով ֆիլմի վերնագրից՝ ինչի՞ մասին է այն լինելու: Թվեք 1-2 գաղափար, կերպար:

Գաղափար

1.
2.

Կերպար

1.
2.

Ֆիլմի դիտումից հետո

Նշեք ֆիլմի տեսակը՝

- մուլտֆիլմ,
- մավերագրական ֆիլմ,
- քարոզչական ֆիլմ,
- կարճ բեմականացում,
- ուսումնական ֆիլմ,
- գեղարվեստական ֆիլմ,
- անիմացիոն ֆիլմ,
- այլ:

- Նշեք այն գաղափարները, կերպարները, որոնք դուք ակնկալում էիք տեսնել նախ-օրոք և իրականացան ֆիլմի դիտումից հետո:
- Ո՞րն է ֆիլմի հիմնական գաղափարը:

- Նշեք, թե որքանով էր ֆիլմը հաջողվել՝ իր հիմնական գաղափարն արտահայտող ձևերն ու միջոցներն օգտագործելիս:
- Ֆիլմն ավելի շատ ձեր բանականությա՞ն, թե՞ զգացմունքների վրա ազդեց: Ի՞նչ զգացիք:
- Նշեք 1-2 բան, որը կարևոր է Հայաստանի Հանրապետության համար:
- Ֆիլմի հեղինակին ի՞նչ հարցեր կուղղեք: Հարցերը կարող են լինել ինչպես անհասկանալի բաների մասին, այնպես էլ կարող են արտահայտել ձեր անհամաձայնությունը:
- Ի՞նչ տվեց այդ ֆիլմը, որը չէր կարողանա տալ գրավոր սկզբնաղբյուրը:

Նկարի վերլուծության հարցաթերթիկ

Դիտում

2-3 րոպե ուսումնասիրեք նկարը: Ընդհանուր պատկերացում կազմեք նկարի մասին, ապա այն բաժանեք հատվածների և նայեք մանրամասները:

Ստորև բերվող աղյուսակում թվարկեք նկարում պատկերված մարդկանց, առարկաները և գործողությունները:

Պատմական ժամանակաշրջան	Մարդիկ	Առարկաներ, խորհրդանիշներ	Գործողություններ

2) <u>Ուսումնական նյութեր</u>

ա) Խորհուրդներ ուսումնական նյութի տեղայնացման վերաբերյալ

«Իմ հայրենիքը» դասընթացի հաջողությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե դասի ընթացքում ինչպես և ինչ միջոցներով է կարողանում ուսուցիչը զուգակցել երկրի, մարզի և բնակավայրերի (գյուղ, քաղաք) պատմության, մշակույթի, տնտեսության և այլ հարցերի ուսուցումը: Փորձը ցույց է տալիս, որ այդ հարցը կարելի է լուծել ուսումնական նյութի տեղայնացման և որոշակի միջոցով: Տեղայնացումը կարելի է իրականացնել տարբեր ձևերով.

1) Ուսումնական նյութի բովանդակությունը կապելով մարզի, բնակավայրի (գյուղ, քաղաք) հետ: Ուսուցիչը դա կարող է անել նպատակային հարցերի համակարգի միջոցով: Եթե տեքստում նկարագրվում է որևէ դեպք կամ երևույթ, ապա ուսուցիչը փորձում է պարզել՝ կա՞ արդյոք առնչություն տվյալ բնակավայրի և դասագրքի տեքստում հիշատակվող իրադարձությունների միջև, ի՞նչ մասնակցություն է ունեցել դրանց այդ բնակավայրի բնակչությունը (կամ առանձին անհատներ): Կարելի է հարցնել, թե ի՞նչ հետևանքներ են ունեցել պատմական իրադարձություններն այդ բնակավայրի վրա: Եթե

բնակավայրը որևէ կապ չի ունեցել տեքստում հիշատակվող պատմական անցուդարձերի հետ, ապա պետք է փոխել հարցադրումների բնույթը: Կարելի է առաջարկել աշակերտներին գտնել նմանություններ և տարբերություններ տվյալ բնակավայրի և այն վայրի միջև, որտեղ տեղի է ունեցել ուսուցանվող իրադարձությունը:

2) Կապ ստեղծելով տվյալ մարզի, բնակավայրի (գյուղ, քաղաք) անցյալի և ներկայի միջև: Այդ կապը նույնպես ապահովվում է հարցերի ճկուն համակարգի միջոցով: Այդ հարցերը կարող են ուղղված լինել՝

- բնակավայրի բնական պայմանների նկարագրությանը (լեռներ, դաշտեր, գետեր, լճեր, բույսեր, կենդանիներ, անտառներ, հանքավայրեր, ճանապարհներ, լեռնանցքներ և այլն),
- պատմաաշխարհագրական տեղանունների բացատրությանը (ինչպես է կոչվել բնակավայրը անցյալում, ինչի հետ է կապված անվան փոփոխությունը, ինչպես է ստուգաբանվում և այլն),
- պատմական վայրերի (ճակատամարտեր, ապստամբություններ, արշավանքներ և այլն), պատմաճարտարապետական հուշարձանների ու կոթողների (հնություններ, տաճարներ, վանքեր ու եկեղեցիներ, ամրոցներ ու դղյակներ, գրչության կենտրոններ և այլն) բնութագրմանը:
- մարզի, բնակավայրի բնակչության կյանքի, կենցաղի ու սովորույթների բնութագրմանը (որտեղից են եկել, ովքեր են եղել առաջին բնակիչները, ինչ անվանի մարդիկ են տվել և այլն),
- տվյալ բնակավայրին և մարդկանց, աշխարհագրական վայրերի գեղեցկությանը նվիրված գիտական, գեղարվեստական գրականությանը, արվեստի գործերին և այլն:

3) էքսկուրսիաների (ցուցադրումների) կազմակերպում դեպի մարզի, բնակավայրի (գյուղ, քաղաք) տարածքի հնավայրեր, պատմամշակութային և աշխարհագրական հիշարժան վայրերը: Էքսկուրսիաների ընթացքում կատարել դիտարկումներ, հավաքել նյութեր, կազմել բնակավայրի հուշարձանների քարտեզ-սխեմաներ, ստեղծել հայրենագիտական թանգարաններ:

Այս աշխատանքների օգնությամբ հնարավոր է դառնում դասի ուսումնական նյութից սահուն անցում կատարելու աշակերտին անմիջականորեն շրջապատող աշխարհ: Բացի այդ, նշված ձևերն ու միջոցները կօգնեն, որպեսզի աշակերտի մտապատկերում առաջացած դեպքերն ու երևույթները չլինեն սոսկ անորոշ և վերացական պատկերներ, այլ հնարավորություն տան նրանց տվյալ երևույթը դիտելու որպես բնության և կյանքի դրսևորում, երևույթ, իրողություն:

«Իմ հայրենիքը» դասընթացի տեղայնացմանը նաև մեծապես նպաստում է աշակերտներին ընթերցանության համար առաջարկվող հետևյալ լրացուցիչ գիտահանրամատչելի գրականությունը.

բ) «Իմ հայրենիքը» առարկայի առանձնահատկությունները

«Իմ հայրենիքը» առարկան ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնեն ուսուցիչները իրենց դասավանդման ընթացքում: «Իմ հայրենիքը» բավականին ընդգրկուն առարկա է, այն իր մեջ միավորում է հարուստ տեղեկություններ ու գիտելիքներ, որոնք սերտորեն առնչվում են հայոց պատմությանը և հայ գրականությանը, աշխարհագրությանն և բնագիտությանը, արհեստի ու արվեստի և գիտության ու մշակույթի այլ ոլորտներին:

«Իմ հայրենիքը» առարկայի գիտելիքների զգալի մասը կարելի է ձեռք բերել զննականորեն, կոնկրետ ու տեսանելի: Աշակերտները կարող են մշտապես տեսնել հայրենի բնությունը, սարերն ու ձորերը, գետերի շառաչը, թռչունների դայլայլը, արտերի ծփանքը, պատմական կոթողները, եկեղեցական ծեսերը և արարողությունները, վանքերն ու խաչքարերը:

«Իմ հայրենիքը» առարկայի գիտելիքները և պատկերացումները խիստ գործնական են, դրանց մի մասի հիմքում ընկած են աշակերտների սեփական դիտարկումները և կենսափորձը: Այդ գիտելիքները կարող են կիրառվել աշակերտների առօրյա կյանքում:

Այս առարկայի գիտելիքների և պատկերացումների մի մասը նրանց տրվում է ոչ թե միջնորդավորված, այլ ուղղակիորեն, նրանց ամենօրյա անմիջական կապի ու հաղորդակցման միջոցով:

«Իմ հայրենիքը» առարկայի բովանդակությունը կազմող բնապատմական միջավայրը միաժամանակ դառնում է ուսումնական միջավայր, ստեղծում բարենպաստ կրթական մթնոլորտ ուսուցման գործընթացում:

գ) Էքսկուրսիայի մասին

Ինչպես արդեն նշվել է, «Իմ հայրենիքը» առարկայի ուսուցման կարևոր խնդիրներից մեկը հայրենաճանաչողությունն է: Իսկ ուսուցման գործընթացում հայրենաճանաչողության արդյունավետ ձև է դաս-էքսկուրսիաների կազմակերպումը: Այստեղ խորհրդի կարգով համառոտ կներկայացվեն դաս-էքսկուրսիայի կազմակերպման և անցկացման հիմնական փուլերը:

Էքսկուրսիան որպես ուսումնական և արտադասարանական աշխատանքի ձև, ինչպես ուսուցման մյուս ձևերը (դաս, սեմինար, գործնական պարապմունք, վիկտորինա և այլն), ունի իր նպատակը և կրթադաստիարակչական խնդիրները: Էքսկուրսիայի նպատակը, խնդիրները պլանավորելիս՝ ուսուցիչը պետք է հաշվի առնի չափորոշիչները, ծրագիրը, տվյալ դասանյութի բովանդակությունը, էքսկուրսիայի օբյեկտները, սովորողների տարիքային առանձնահատկությունները, կարիքները, հետաքրքրությունները և այլ հարցեր: Էքսկուրսիայի արդյունավետությունը մեծապես կախված է նրա նախապատրաստումից, որին պետք է ձեռնամուխ լինել դրա անցկացումից օրեր առաջ: Ուսուցիչը որոշում է այն օբյեկտները (տեսարժան վայրեր, պատմաճարտարապետական հուշարձաններ, հուշահամալիրներ, հնավայրեր և այլն), որոնք դիտելու և ուսումնասիրելու համար այցելելու են սովորողները, ապա գծում այդ օբյեկտները տանող երթուղին՝ ճանապարհային քարտեզը: Այնուհետև ուսուցիչը սկսում է էքսկուրսիայի համար նախա-

տեսված օբյեկտների մասին նյութերի հավաքումը, ընտրությունը և մշակումը: Նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո ուսուցիչը սովորողներին հայտնում է էքսկուրսիաների թեման , օբյեկտների ցանկը և անցկացման օրն ու հանձնարարում լրջորեն նախապատրաստվել: Նրանք պետք է ուսումնասիրեն դասանյութը, ծանոթանան ուսուցչի առաջարկած թեմային առնչվող գիտահանրամատչելի և տեղեկատու գրականությանը, պատրաստեն հարցեր իրենց հետաքրքրող օբյեկտների վերաբերյալ: Նախնական աշխատանքներն ավարտելուց հետո մշակվում է դաս-էքսկուրսիայի պլանը.

1. *էքսկուրսիայի թեման,*
2. *էքսկուրսիայի նպատակը,*
3. *էքսկուրսիայի անցկացումը:*

Այս փուլում ուսուցիչը սովորողներին տանում է, ասենք, մոտակա եկեղեցի՝ դիտելու ու ծանոթանալու համար: Սկզբում ուսուցիչն ինքն է բացատրություններ տալիս այդ կառույցի, նրա բաղկացուցիչ մասերի և դրանց նշանակության մասին: Այդ ընթացքում սովորողները շատ բան են հիշում իրենց կարդացածից, հայտնում կամ ցույց տալիս, որ այս կամ այն փաստն արդեն գիտեին կամ գաղափար ունեին: Նրանց նախնական տեղեկություններն էքսկուրսիայի ընթացքում մարմնավորում են որոշակի նյութական բովանդակություն, վերածվում վառ ու անջնջելի տպավորության: Ամփոփումը կարելի թողնել հաջորդ դասին, որպեսզի սովորողների տեսածն ու լսածը գիտակցության մեջ որոշակի նստվածք տան և նրանք հասցնեն այդ ամենի մասին մեկ անգամ ևս խորհել, վերստին կարդան դասագրքի նյութը ու պատրաստվեն դրանք համադրելու և ընդհանրացնելու: Ամփոփումը կարելի է սկսել էքսկուրսիայի նկարագրությամբ և ավարտել ստացած տպավորությունների ու ճանաչողության մեջ կարևորություն ունեցող գիտելիքների համակարգմամբ: Էքսկուրսիան կարելի է ամփոփել նաև շարադրություն գրելու աշխատանքով:

դ) Ամեն ինչ գնահատման մասին

- գնահատվում են ուսուցման արդյունքները (գիտելիքները, կարողությունները, մտածողության մակարդակը, արժեքները, դիրքորոշումը, վերաբերմունքը) և գործընթացները:
- Գնահատում է ուսուցիչը, աշակերտը՝ ինքն իրեն, խումբը: Ուսուցչի գնահատականը աշակերտների համար կարող է լինել ոչ ճիշտ, որովհետև աշակերտները չեն մասնակցում գնահատմանը, տեղի չի ունենում ինքնագնահատում: Աշակերտը պետք է գնահատի ինքն իրեն: Գնահատել կարող է նաև խումբը, որը հաճախ ավելի օգտակար, արժեքավոր և հավաստի է խմբի անդամների համար:
- Գնահատումը կատարվում է գնահատականներով, թվանշանով և հետադարձ կապով: Գնահատականի հարցը պարզ է, այն չափում է ոչ միայն աշակերտի՝ առարկայի յուրացման աստիճանը, այլև գիտելիքները գործնականում՝ իրական կյանքում կիրառելու կարողությունը: Բացի սրանից՝ գնահատականը ներառում է աշակերտների զգացմունքները, արձագանքները, դրանց բավարարվածության աստիճանը, ինքնագնահատումը: Հետադարձ կապը արտահայտվում է արձագանքի մեջ, անդրադարձի միջոցով, որը հնարավորություն է տալիս պարզելու

աշակերտի մասնակցությունը ուսուցման գործընթացին, պարզելու ձեռքբերումները և առաջընթացը, ձեռնարկելու քայլեր բացթողումները վերացնելու համար:

- Գնահատումը կարող է կատարվել սովորելուց առաջ, սովորելու ընթացքում և սովորելուց հետո: Սովորելուց առաջ գնահատման համար նախօրոք պետք է սահմանել չափանիշներ: Կարևոր է, որ աշակերտը նախապես իմանա, թե ինչ է ակնկալվում իրենից, և ինքն ինչ պետք է անի լավ արդյունքի հասնելու համար: Սովորելու ընթացքում կատարվող գնահատումը հնարավորություն է տալիս բարելավել գիտելիքները և հմտությունները՝ մինչև աշխատանքն ավարտելը: Գնահատման գործընթացում չափազանց կարևոր է գնահատման իրավիճակի ընտրությունը: Այսինքն պետք է ընտրել գնահատելու այնպիսի իրավիճակներ, որոնց դեպքում առավելագույնս կերևա ուսուցման գործընթացի նպատակների իրագործման աստիճանը:
- Գնահատումը կարող են պլանավորել ուսուցիչը և աշակերտը: Անհրաժեշտ է աշակերտներին ընդգրկել գնահատման պլանավորման մեջ՝ սովորեցնելով մշակել գնահատման չափանիշներ (սանդղակներ): Այդ դեպքում նախ՝ նրանք կսովորեն գնահատել, 2-րդ՝ կիմանան, թե ինչ է պահանջվում իրենցից, 3-րդ՝ կմեծանա պատասխանատվությունը, 4-րդ՝ ուսուցման արդյունքների գնահատումը կդառնա փոխադարձաբար ընդունելի:
- Գնահատումը ոչ թե բաժանում է դասավանդումը, ուսուցումը և գնահատումը, այլ միավորում է այդ երեք բաղադրիչները:
- Տեղի է ունենում գնահատանիշերով, թվանշաններով գնահատելու գերակայության փոփոխություն: Քանակական գնահատման (միավորներ, թվանշաններ) հետ միասին օգտագործվում է որակական գնահատումը: Որակական գնահատումը, որը կոչվում է նաև նկարագրական, օգտագործվում է հիմնական արժեքային համակարգի և անձի զարգացման ոլորտում:
- Գնահատումը ստանում է շարունակական կրթության անընդհատ գնահատման գործընթացի ձև:
- Գնահատման գործընթացը դառնում է թափանցիկ, և ամբողջությամբ բացահայտվում են արդյունքները:
- Կարևոր է, որ գնահատման չափանիշները լավ մշակված լինեն, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինի ապահովել ձեռքբերումների գործընթացը և հստակորեն տեսնել սպասվելիք արդյունքները:

ե) Թեմատիկ պլան

Թեմատիկ պլանը կազմված է «Իմ հայրենիքը» առարկայի նոր չափորոշչի և ծրագրի հիման վրա և լիովին համապատասխանում է դրանց: Թեմատիկ պլանում հաշվի են առնվել այն կարևորագույն պահանջները, որոնք պետք վերջնարդյունքների միջոցով ապահովեն կարողունակությունների ձևավորումը: Թեմատիկ պլանում տրված են թեմայի ուսուցման նպատակը, վերջնարդյունքները, հիմնական գաղափարները և հասկացությունները, միջառարկայական կապերը: Սրանք կնպաստեն աշակերտների մոտ աշխարհի ամբողջական պատկերի ստեղծմանը: Թեմատիկ պլանում ժամաբաշխումը կատարվել է ըստ թեմաների և դասերի: Ամեն թեմայից հետո երեք ժամ հատկացվել է գործնական աշխատանքներին և ամփոփումներին՝ հետադարձ կապի միջոցով: Թեմատիկ պլանով երկրորդ կիսամյակում դասաժամեր են հատկացված միավորային գնահատմանը: Մինչև այդ, ուսուցիչն առաջին կիսամյակում կատարում է ձևավորող (ուսուցանող) գնահատում: Բացի այդ, ուսուցչի իր տրամադրության տակ է թողնվում 3 պահուստային ժամ: Թեմատիկ պլանն օրինակելի է, և ուսուցիչը կարող է օգտվել այս թեմատիկ պլանից կամ կազմել իրենը:

Դասա-ժամեր	Թեմա, դաս	Նպատակ	Վերջնարդյունք	Առաջարկվող գործունեության ձևեր	Գաղափարներ, հասկացություններ	Միջառարկայական, ներառարկայական կապեր
ԹԵՄԱ 1. ԵՍ ԱՊՐՈՒՄ ԵՄ ԼԵՌՆԱՅԻՆ ԵՐԿՐՈՒՄ ՔԱՐՏԵԶՆ ԻՄ ԳՈՐԾԻՔՆ Է ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ (11 ժամ)						
1	**Դաս 1.** Ես իմ փոքր հայրենիքում	Ձևավորել **հայրենիք** հասկացությունը մեկնաբանելու, տարբեր քարտեզներ ճանաչելու և կիրառելու հմտություն, **հոգատար վերաբերմունք** սեփական ազգի ու հայրենիքի պատմամշակութային ձեռքբերումների նկատմամբ:	1. Նկարագրի իր բնակության վայրը, պետությունը, հայոց հայրենիքը, նրա աշխարհագրական դիրքը, սահմանները, պատմաաշխարհագրական միջավայրը: 2. Ներկայացնի հայրենիքի խորհրդանիշները: 3. Մեկնաբանի և կիրառի զանազան քարտեզներ: 4. Գնահատի իր համայնքի, ազգի պատմամշակութային ձեռքբերումները:	1. Բնակավայրի քարտեզի ստեղծում 2. Տոհմածառի կազմում 3. Հայկական լեռնաշխարհի տարածքի՝ նահանգներ, մայրաքաղաքներ, բերդեր, ամրոցներ, եկեղեցիներ, լեռներ, լճերի վերաբերյալ ալբոմի կամ գրքի ստեղծում:	Անհատ և պետություն «Ժամանակ, տեղ, տարածություն», «Հայրենիք»	**Մաթեմատիկա**-մասշտաբ **Բնագիտություն**-աշխարհագրական օբյեկտների նկարագրություն: **Մայրենի**-տեքստերի ընթերցում՝ «Հերոդոտոս, Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի, Քսենոփոն, Մարկո Պոլո և այլք»:
2	**Դաս 2.** Իմ երկիրը, մարզը և համայնքը					
3-4	**Դաս 3-4.** Մեր հարևանները					
5	**Դաս 5.** Քարտեզների տեսակները և տարբերությունը. Արդյոք կարևոր են քարտեզները պատմության մեջ					
6	**Դաս 6.** Ես ճանապարհորդում եմ Հայկական լեռնաշխարհի տարածքով՝ լեռներ, լճեր, նահանգներ					
7	**Դաս 7.** Ես ճանապարհորդում եմ Հայկական լեռնաշխարհի տարածքով՝ մայրաքաղաքներ, բերդեր, ամրոցներ, եկեղեցիներ					
8	**Դաս 8.** Զինանշաններ և դրոշներ՝ ժամանակակից և պատմական					

9	Տոհմածառի կազմում **(գործնական աշխատանք)**					
10	Բնակավայրի քարտեզի կազմում **(գործնական աշխատանք)**					
11	Ամփոփում՝ հետադարձ կապի միջոցով կամ էքսկուրսիա բնակավայրով					
ԹԵՄԱ 2. ՀԱՅԵՐԻ (ԻՄ) ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ, ԿԵՆՑԱՂՆ ՈՒ ԱՎԱՆԴԱՊԱՏՈՒՄՆԵՐԸ (15 ժամ)						
12-13	**Դաս 9-10.** Մշակույթ և կենցաղ: Ազգային խոհանոց	Ձևավորել հայ ժողովրդի ծագումնաբանությունը, մշակույթը, կենցաղը, ավանդապատումները, ծեսերն ու տոները նկարագրելու և վերլուծելու կարողություն: Սերմանել հոգատար վերաբերմունք ու վարքագիծ ազգային հոգևոր և նյութական մշակույթների նկատմամբ:	1. Մեկնաբանի Հայկական լեռնաշխարհի բնակիչների ավանդական զբաղմունքը, առօրյա կյանքն ու կենցաղը, նյութական և հոգևոր մշակույթի բաղադրիչները (մշակույթը և կենցաղը, ազգային տարազը, խոհանոցը, կիրառական արվեստը), ավանդույթները, տոներն ու ծեսերը: 2. Վերլուծի հայ ժողովրդի ծագման մասին ավանդապա-տումները՝ ներկայացնի դրանց ազդեցությունը իր ինքնության ձևավորման վրա: 3. Վերլուծի տեղանքի ու իրադարձությունների, պատմաաշխարհագրական տեղանունների հետ կապված ավանդապատումները: 4. Գնահատի ազգային հոգևոր-մշակութային արժեքները՝ որպես համամարդկային արժեքներ: 5. Ներկայացնի ՀՀ ազգային փոքրամասնությունների ավանդական մշակույթն ու կենցաղը:	1. Թղթապանակի ստեղծում կիրառական արվեստի վերաբերյալ: 2. Սահիկաշարի ստեղծում: 3. Հարցազրույց տատիկների, պապիկների հետ: 4. Տեղական ավանդույթների ու ավանդապատումների գրի առնում: 5. Շաբաթօրյակի կազմակերպում պատմամշակութային և հոգևոր հուշարձաններում:	«Ինքնություն», «Զարգացում», «Մշակույթ»	**Մայրենի**-ազգային տոների ու ավանդույթների, կենցաղի նկարագրություն: **Արվեստ**-տոների բեմադրում, ազգային երգ ու պար:
14	**Դաս 11.** Ազգային տարազ					
15	**Դաս 12.** Կիրառական արվեստ					
16	**Դաս 13.** Հայ ժողովրդի ծագման ավանդապատումները					
17	**Դաս 14.** Ավանդապատումներ՝ տեղանքի հետ կապված (Շիրակ, Արագած, Փարվանա)					
18	**Դաս 15.** Ավանդապատումներ տեղանքի հետ կապված (Ծիծեռնակաբերդ, Հաղպատ, Զանգեզուր, Ծաղկաձոր)					
19	**Դաս 16.** Պետական տոներ					
20	**Դաս 17.** Ավանդույթներ, ծեսեր, եկեղեցական տոներ (Սուրբ Ծնունդ, Սուրբ Սարգիս)					
21	**Դաս 18.** Ավանդույթներ, ծեսեր, եկեղեցական տոներ (Տյառնընդառաջ, Սուրբ Զատիկ)					
22	**Դաս 19.** Ավանդույթներ, ծեսեր, եկեղեցական տոներ (Վարդավառ, Խաղողօրհնեք)					
23	**Դաս 20.** Հայաստանի ազգային փոքրամասնությունների					

	ավանդական մշակույթն ու կենցաղը, ավանդույթներն ու տոները					
24	Թղթապանակի ստեղծում կիրառական արվեստի վերաբերյալ (**գործնական աշխատանք**)					
25	Տեղական (բնակավայրի) ավանդազրույցների գրառում (**գործնական աշխատանք**)					
26	Ամփոփում հետադարձ կապի միջոցով կամ էքսկուրսիա, բնակավայրի հուշարձանների քարտեզագրում					
ԹԵՄԱ 3. ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ (11 ժամ)						
27	**Դաս 21.** Քրիստոնեական արժեհամակարգ	Ձևավորել քրիստոնեության հոգևոր, բարոյական, արժեքային համակարգի հիմունքներն ուսումնասիրելու, հոգևոր-ազգային կառույցի դերը հասարակության կյանքում կարևորելու հմտություն, հարգանք սեփական ավանդույթների նկատմամբ:	1. Ուսումնասիրի քրիստոնեության հոգևոր, բարոյական, արժեքային համակարգի հիմունքները: 2. Նկարագրի պատմական և մշակութային գործիչներին ու նրանց գործունեությունը քրիստոնեության ընդունման ու տարածման գործում: 3. Մեկնաբանի քրիստոնեական եկեղեցու խորհուրդները: 4. Նկարագրի Հայաստանում բնակվող այլ ժողովուրդների կրոնադավանաբանական համակարգերը: 5. Համեմատի նախա-քրիստոնեական և քրիստոնեական արժեհամակարգերի ընդհանրություններն ու առանձնահատկությունները հայ հասարակության մեջ:	Աղբյուրների ուսումնասի-րություն Դերային և համագործակցային խաղեր Իրավիճակների խաղարկում և քննարկում, բանավեճ	Արժեք «Հավատք», «Փոփոխություն»	**Մայրենի**-ստեղծագործություններ ի գրական արժեքի գնահատում **Արվեստ**-մանրանկարչության ուսումնասիրում, երգեր
28	**Դաս 22.** Աստվածաշնչյան առակներ, նորկտակարանային պատմություններ					
29-30	**Դաս 23-24.** Քրիստոնեական եկեղեցու խորհուրդները					
31	**Դաս 25**. Քրիստոնեության ընդունումը. առաքյալները					
Առաջին կիսամյակի ավարտ (մոտավորապես)						
32	**Դաս 26.** Հայոց եկեղեցու սրբերը					
33	**Դաս 27.** Սուրբ. Գրիգոր Լուսավորիչ և սուրբ. Մեսրոպ Մաշտոց					
34	**Դաս 28.** Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների կրոնա-մշակութային համակարգերը					
35	Խմբային քննարկում, իրավիճակ առաքյալներ և սրբեր (**գործնական աշխատանք**)					

36	Քրիստոնեական արժեհամակարգի ցուցապաստառի կազմում (**գործնական աշխատանք**)					
37	Ամփոփում հետադարձ կապի միջոցով կամ էքսկուրսիա մոտակա եկեղեցի՝ մասնակցություն պատարագին					
ԹԵՄԱ 4. ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԷՊՈՍԸ՝ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ»-Ը, ԵՎ ԱՅԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԷՊԻԿԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ (17 ժամ)						
38	**Դաս 29.** «Սասունցի Դավիթ» էպոսը	Ձևավորել «Սասնա ծռեր» էպոսի և այլ ժողովուրդների էպիկական պատումների օրինակով ազգերի մշակութային առանձնահատկությունները վեր հանելու հմտություն:	1. Վերլուծի «Սասունցի Դավիթ» էպոսում ներկայացված արժեհամակարգը: 2. Համեմատի և հակադրի այլ ժողովուրդների էպոսներում ներկայացված արժեհամակարգը «Սասունցի Դավիթ» էպոսի հետ: 3. Տարբերակի էպոսի հերոսների գործունեությունը: 4. Մեկնաբանի էպոսի հերոսների բնավորության գծերը և գնահատի նրանց ազդեցությունը իր վարքի դրսևորման վրա: 5. Հետազոտի և բացահայտի սեփական շրջապատում էպոսի «մերօրյա» հերոսներին:	Հերոսների կերպարների ուսումնասիրում Աղբյուրի ուսումնասիրում Ձեկույց	Արժեք «Մշակույթ», «Հարաբերություններ»	**Մայրենի**-առասպել, էպոս **Բնագիտություն**-կլիմայի կամ լանդշաֆտի փոփոխություն **Մաթեմատիկա**-օրացույց՝ լուսնային, արևային, շաբաթների բաժանում և այլն
39	**Դաս 30.** Էպոսի ճյուղերը: Սանասար և Բաղդասար					
40	**Դաս 31**. Մեծ Մհեր					
41	**Դաս 32.** Սասունցի Դավիթ					
42	**Դաս 3**3. Սասունցի Դավթի ամուսնությունը և մահը					
43	**Դաս 34.** Փոքր Մհեր					
44	**Միավորային գնահատում**					
45	**Դաս 35.** Հասարակությունն էպոսում					
46	**Դաս 36.** «Սասունցի Դավիթ» էպոսի կերպարները: Սանասար և Բաղդասար, Մեծ Մհեր					
47	**Դաս 37.** Սասունցի Դավթի կերպարը					
48	**Դաս 38**. «Սասունցի Դավիթ» էպոսի մյուս կերպարները					
49	**Դաս 39.** «Սասունցի Դավիթ» էպոսի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման գործում					

50	**Դաս 40**. Այլ ժողովուրդների էպոսները					
51	**Միավորային գնահատում**					
52	Էպոսի կերպարների պատկերասրահի ստեղծում (**գործնական աշխատանք)**					
53	Էպոսի անունը կրող պուրակի ստեղծում (**գործնական աշխատանք)**					
54	Ամփոփում հետադարձ կապի միջոցով կամ էքսկուրսիա «Սասունցի Դավիթ» հուշարձան: Կարելի է ընթերցումներ կազմակերպել բնակավայրի ձեր սիրած հուշարձանի մոտ					
ԹԵՄԱ 5. ԱՆՀԱՏՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ (11 ժամ)						
55-56	**Դաս 41-42.** Ո՞վ է անհատը. Տնտեսական և քաղաքական գործիչ	Ձևավորել անհատների դերը հասարակության ձևավորման գործում վերլուծելու, գնահատելու հմտություններ:	1. Ուսումնասիրի անհատի ունեցած ազդեցությունը հայ հասարակության վրա: 2. Վերլուծի անհատի ունեցած դերը հասարակության զարգացման տարբեր բնագավառներում: 3. Գնահատի անհատի ունեցած դերը հասարակության կյանքում՝ ձևավորելով հարգալից վերաբերմունք նորարարություն արժեհամակարգի վերաբերյալ:	Պաստառ Հարցում Թղթապանակ	Համակեցություն Փոփոխություն, Զարգացում	**Մայրենի**- ստեղծագործություններ ի գրական արժեքի գնահատում **Մաթեմատիկա**- հաշվարկներ, խնդիրների ստեղծում
57	**Դաս 43.** Ռազմական գործիչ					
58	**Դաս 44.** Մշակութային գործիչ					
59	**Դաս 45.** Ինչպես է ձևավորվում հասարակությունը					
60	**Միավորային գնահատում**					
61	**Դաս 46**. Անհատի դերը հասարակության կայացման գործում					
62	Դեբատ: Անհատ և հասարակություն (**գործնական աշխատանք)**					
63	Հայտնի գործիչների գրքույկի կազմում (**գործնական աշխատանք)**					

64	**Միավորային գնահատում**					
65	Ամփոփում հետադարձ կապի միջոցով կամ էքսկուրսիա բնակավայրի հայտնի հուշարձան (հնարավոր է զրույց բնակավայրի գործչի (գործիչների) հետ)					
66-68	**ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ (3 ԺԱՄ)**					

գ) Դասի նմուշ-օրինակ

Ավարտելով տարրական դպրոցը՝ աշակերտները ոտք են դնում միջին (հիմնական) դպրոց, մի նոր կրթական միջավայր, որտեղ նրանց շրջապատում են նոր ուսուցիչներ, շրջանառության մեջ են դրվում նոր առարկաներ, այդ թվում նաև «Իմ հայրենիքը» առարկան: Այս առարկան դասավանդող ուսուցիչներն ուստարվա սկզբին առաջին դասերին երեխաներին պետք է աստիճանաբար հարմարեցնեն նոր պայմաններին ու պահանջներին: Նրանց ծանոթացնեն «Իմ հայրենիքը» առարկայի կարևորությանը, բովանդակությանը, կառուցվածքին: «Իմ հայրենիքը» դասավանդող ուսուցիչներին օգնելու նպատակով այստեղ ներկայացվում է առաջին դասի նմուշ-օրինակը (օրինակելի պլանը մշակվել է մանրամասն, որպեսզի ուսուցիչը ոչ թե ընդօրինակի ամբողջը, այլ առանձին փուլերի ընտրության հնարավորություն ունենա):

Թեմա 1. Ես ապրում եմ լեռնային երկրում: Քարտեզն իմ գործիքն է՝ ժամանակի և տարածության մեջ

Դաս 1. Ես իմ փոքր հայրենիքում

1. Դասի հիմնական ենթաթեմաներ

- Իմ հայրենիքը
- Գյուղը և քաղաքը որպես փոքրիկ հայրենիք
- Հայրենիքի պաշտպանությունը

2. Դասի նպատակը – ուսուցանել «հայրենիք», «փոքր հայրենիք» հասկացությունները, ձևավորել մեծ սեր ու հոգատար վերաբերմունք Հայաստան աշխարհի, հայրենի ծննդավայրի (գյուղ, քաղաք, ավան) նկատմամբ: Դրանց միջոցով հասանելի դարձնել այն գաղափարը, որ հայրենիքն սկսվում է յուրաքանչյուրի ծննդավայրից, տուն ու տեղից, ընտանիքից, այսինքն՝ փոքր հայրենիքից, որը հետո ձուլվում է մեծ հայրենիքին:

3. Խնդիրներ

ա) Կրթական – հաղորդել գիտելիքներ հայրենիքի, հայրենի ծննդավայրի, նրա մարդկանց, բնության, պատմամշակութային հուշարձանների մասին, ամրապնդել դրանք սովորողների հիշողության մեջ և մտապատկերում:

բ) Հմտություններ – զարգացնել վարժ և սահուն ընթերցելու, ծննդավայրի մասին պատմական փաստեր և ժամանակակից տեղեկություններ հավաքելու, ընտրելու, մշակելու, կենսափորձից հայտնի նախկին և նոր ձեռք բերած գիտելիքներն ընդհանրացնելու և եզրակացություններ կատարելու կարողությունը:

գ) Դաստիարակչական (արժեքների և վերաբերմունքի ձևավորում)

- Ծննդավայրի, նրա պատմության, հայտնի մարդկանց, մշակույթի ու բնության մասին գիտելիքների, կոնկրետ բնական օբյեկտների, տեսարժան վայրերի միջոցով

սերմանել հայրենասիրության, արժանապատվության, հպարտության զգացումներ հայրենի բնակավայրի նկատմամբ,
- ցույց տալ ծննդավայրի, ընտանիքի դերը հայրենիքի հզորության և պաշտպանության գործում,
- ձևավորել ծննդավայրի ավանդույթները, պատմամշակութային հուշարձաններին՝ որպես ազգային արմատներին հավատարիմ մնալու դրսևորում:

դ) Զարգացման – Հայրենի գյուղի (ավան) և քաղաքի մասին գիտելիքների և դրանց կիրառման միջոցով զարգացնել սովորողների ճանաչողական ընդունակությունները, քննադատական և ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը, հիշողությունը:

4. Վերջնարդյունքներ

- **իմանա**

- «հայրենիք», «փոքր հայրենիք» հասկացությունները, նրանց սահմանները, աշխարհագրական դիրքը, միջավայրը
- իր համայնքը, նրա ձեռքբերումները:

- **կարողանա**

- նկարագրել իր բնակավայրը, համայնքը, աշխարհագրական միջավայրը,
- համեմատել հայրենիքը փոքր հայրենիքի հետ,
- գնահատել համայնքի պատմամշակութային ձեռքբերումները,
- գիտակցել, որ հայրենիքը սրբություն է,
- գնահատել հայրենիքի պաշտպանության կարևորությունը,
- կարևորել ծննդավայրի ավանդույթները որպես ազգային արմատներին հավատարիմ մնալու դրսևորում:

5. **Առանցքային գաղափարներ, խաչվող հասկացություններ, անուններ**

Մեծ հայրենիք, Փոքր հայրենիք, Արմենիա, հայրենիքը հավիտենական արժեք, Գարեգին Նժդեհ, Ռաֆֆի:

6. **Ուսուցման միջոցներ** – դասագիրք, ՀՀ և ԱՀ քարտեզ, բանաստեղծություններ, արձակ գործեր՝ նվիրված հայրենիքին, հայրենի բնակավայրին (Ղ. Աղայան, Գ. Դոդոխանյան, Ավ. Իսահակյան, Հ. Շիրազ, Ա. Բակունց, Վ. Անանյան և ուրիշներ), նկարներ:

7. **Միջառարկայական կապեր**

Ես և շրջակա միջավայրը, Մայրենի (2-4-րդ դասարաններ)-տեքստերի ընթերցում, երաժշտություն (3-րդ և 4-րդ դասարաններ), կերպարվեստ (2-4-րդ դասարաններ):

8. **Դաս տիպ** – նոր նյութի հաղորդման դաս:

9. **Ուսուցման մեթոդներ, հնարներ** – պատմում, հարց ու պատասխան, աշխատանք դասագրքով, զննական-ցուցադրական, մտագրոհ, քառաբաժան, հնգյակներ և այլն:

10. Դասի ընթացքը.

ա) կազմակերպչական, նախապատրաստական – սովորողների հաշվառում, աշխատատեղերի կահավորում, կրթական միջավայրի և հուզական մթնոլորտի ստեղծում (թեմային առնչվող երաժշտության, երգի, բանաստեղծության ունկնդրում, օրինակ՝ «Ես իմ անուշ Հայաստանի» կամ «Նաիրյան դալար բարդի» երգի ունկնդրում, Ա. Բակունցի «Մթնաձորից» մի հատվածի ընթերցում, ծննդավայրի մասին պատմող տեսանյութ և այլն):

բ) Հենակետային գիտելիքների վերականգնում – Երաժշտության (մինչև նոր նյութի ուսումնասիրում) ունկնդրումից կամ գրական հատվածի ընթերցումից հետո, քանի որ սա առաջին դասն է, աշակերտները տնային հանձնարարություններ չունեն, ուսուցիչը համառոտ տեղեկություններ է հայտնում նոր առարկայի ուսումնասիրության նպատակի, բովանդակության, կառուցվածքի մասին: Դրանից հետո ուսուցիչը հանձնարարում է բացել և ծանոթանալ դասագրքերի բովանդակությանը, նկարազարդումներին, լրացուցիչ նյութերին և հարցերին ու առաջադրանքներին: Ավարտելուց հետո ուսուցիչն աշակերտների հետ զրուցում է հետևյալ հարցերի շուրջ.

- ինչպես օգտվել դասագրքից և ինչպես աշխատել դասագրքով,
- դասագրքին ծանոթանալուց հետո ի՞նչ տպավորություն ստացան նրանք,
- արդյոք առաջացա՞վ հետաքրքրություն դասագրքի նկատմամբ,
- ի՞նչ փաստեր նկատեցին դասագրքում, որոնք նրանց ծանոթ են նախորդ, ուսումնական առարկաներից և իրենց կենսափորձից:

Զրույցի արդյունքներն ամփոփելուց և դասագրքի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելուց հետո ուսուցիչն անցնում է նոր նյութի հաղորդմանը:

գ) Նոր նյութի հաղորդում – ուսուցիչն իր խոսքը սկսում է առարկայի անվանումից՝ նշելով, որ այն ցույց է տալիս, թե ուսումնական առարկան ամբողջովին նվիրված է հայոց հայրենիքին, նրա պատմությանը և մշակույթին, ժողովրդի կյանքին ու կենցաղին, խոհանոցին ու տարազին: Հետո նա փորձում է պարզել, թե ինչպիսին է նրանց նախնական պատկերացումները հայրենիքի մասին: Այդ նպատակով նա կազմակերպում է մտագրոհ մեթոդական հնարը: Գրատախտակին գրում է «հայրենիք» հասկացությունը, հարցնում սովորողներին, թե ինչ է հայրենիքը:



Յուրաքանչյուր աշակերտ ասում է «հայրենիք» բառի շուրջ մտքում ծագած առաջին իսկ բառը, բառակապակցությունը՝ առանց մեկնաբանության: Աշակերտների բոլոր ասածները գրանցվում են գրատախտակին (թղթի վրա) դասի ավարտին դրանց անդրադառնալու, նախօրոք գրածները լրացնելու, ամբողջացնելու և վերլուծելու արդեն սովորածի հիման վրա: Հարկ է խրախուսել աշակերտին և գրառել նրա ասած ցանկացած բառ, արտահայտություն: Այնուհետև սկսում են խմբավորել ասածները, գրառվածները, որից հետո ուսուցիչը հանձնարարում է դրանց հիման կազմել նախադասություն հայրենիքի մասին: Նա կարող է հարցնել նաև, թե ով գիտի ասույթ կամ բանաստեղծություն հայրենիքի մասին: Եթե աշակերտները չկարողանան հիշել որևէ ասույթ, ապա ուսուցիչն ինքը կարող է ասել մեկ-երկու ասույթ կամ քառյակ և դրանք վերլուծել աշակերտների հետ: Օրինակ՝

- Պիտի մեռնեմ Հայաստանը շատ սիրելուց (Վ. Սարոյան):
- Մարդն առանց հայրենիքի սոխակ է առանց երգի (ժողովրդական):
- Ուժեղինն են աշխարհը, հայրենիքը, ազատությունը և ամեն ինչ (Գ. Նժդեհ):
- Կսիրեմ հայրենիքս, վասնզի քաջության և փառաց գեղեցիկ հայրենիք է (Մ. Պեշիկթալշյան):
- Է՜յ, ջա՛ն հայրենիք, ինչքան սիրուն ես...
  Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես,
  Դու սրտիս մեջ ես, ոչ լեզվիս վրա... (Հ. Շիրազ):
- Բայց կա մի այլ սեր, որ սահման չունի...
  Դա հայրենիքի սերն է բոցավառ (Ն. Ծատուրյան):
- Հայաստան ասելիս, հասակս ծաղկում է (Հ. Սահյան):

Մտագրոհի և ասույթների բանաստեղծական հատվածների հետ աշխատանքի արդյունքների ամփոփումից հետո պարզ դարձավ, որ սովորողները հասկացել են «հայրենիք» հասկացությունը: Ժամանակն է անցնել փոքր հայրենիքի մասին պատմող դասանյութի 2-րդ ենթավերնագրի ուսուցմանը: Ուսուցիչը դասարանը բաժանում է երկու՝ իմ գյուղը և իմ քաղաքը մասերի և հանձնարարում նրանց ընթերցել և քարտեզագրել

տեքստի՝ իրենց հանձնարարված մասերը: Հանձնարարությունը կատարելուց հետո կազմակերպվում է համադասարանային քննարկում, ապա կազմվում է մեկ ընդհանուր քարտեզ և գծվում գրատախտակին: Այն կարող է ունենալ հետևյալ տեսքը



Տեքստի քննարկման տեսանկյունից կարևոր է նաև նրանում գլխավոր մտքերը գտնելը և առանձնացնելը: Այդ նպատակով ուսուցչի հանձնարարությամբ սովորողներն առանձնացնում են այդ մտքերը և դասավորում տրամաբանական հաջորդականությամբ: Այդ աշխատանքի արդյունքը կարող է լինել այսպիսին՝

1. Մեծ հայրենիքը սկսվում է հայրենի գյուղից և քաղաքից:
2. Ճանաչելով հայրենիքը՝ այն պետք է դիտել որպես սրբություն:
3. Հայրենիքի զգացումը միշտ պետք է լինի յուրաքանչյուրի սրտում ու մտքում:

Տեքստային քննարկումը կարելի է ավարտել դերային խաղով: Ուսուցչի առաջարկությամբ երկու սովորողներ հանդես են գալիս գյուղի և քաղաքի բնակչի գլխավոր դերով: Նրանք ներկայացնում են գյուղը և քաղաքը, դրանց բնությունը, մարդկանց զբաղմունքը, տեսարժան և ժամանցային վայրերը, հուշարձանները: Իսկ մյուս սովորողները, որպես քաղաքի և գյուղի բնակիչների դերակատարներ, կարող են հարցեր ուղղել նրանց՝ պարզելու քաղաքի ու գյուղի առավելություններն ու տարբերությունները, հայտնել իրենց կարծիքներն ու տեսակետները: Այնուհետև ուսուցիչը փոքր հայրենիքի՝ հայրենի գյուղի ու քաղաքի գաղափարը խորացնելու համար կարող է նաև այլ հնարների դիմել: Կարելի է սովորողներին ներկայացնել թեմային առնչվող բանաստեղծություններ և հանձնարարել կարդալ դրանք և իր զգացողություններն ու ապրումները գրառել քառաբաժնում:

Աշակերտներին կարելի է առաջարկել Վ. Տերյանի և Հ. Հայրապետյանի բանաստեղծությունները (տե՛ս հավելված 1 և 2):

1. Ի՞նչ եք տեսնում բանաստեղծություն կարդալիս զգայություններ - տեսողական, լսողական - զգացողական	2. Ի՞նչ եք զգում բանաստեղծություններ կարդալիս վերաբերմունք - հույզեր - զգացմունքներ
3. Կապը ձեր և իրական կյանքի հետ - ասոցացիաներ - առնչություններ - օրինակներ	4. Նոր վերնագիր - ընդհանրացում - վերաիմաստավորում - գնահատում

Վերջին՝ «Հայրենիքի պաշտպանությունը» ենթավերնագրի ուսուցումը կարելի է սկսել հայ զինվորի երդման տեքստի ընթերցմամբ (այն կարող է ընթերցել ուսուցիչը կամ նրա հանձնարարությամբ սովորողներից մեկը), որից հետո առաջարկվում է երդման տեքստում գտնել գլխավոր միտքը (գաղափարը) և համեմատել տեքստի հետ: Այնուհետև բացատրվում են «հավիտենական արժեք», «սրբազան պարտք» հասկացությունները: Կարելի է օգտագործել հայ զինվորի երդման հանդիսավոր արարողությունը պատկերող տեսանյութ: Տեսանյութը դիտելուց հետո սովորողներին տրվում են հետևյալ հարցերը.

1. Երդման արարողության տեսանյութից ի՞նչը ձեզ դուր եկավ:
2. Ի՞նչ զգացողություն ունեցաք տեսանյութը դիտելիս:
3. Ինչ եք կարծում, ինչո՞ւ են ծնողները ներկա գտնվում երդման արարողությանը:
4. Կուզենայի՞ք լինել զինվորական, ինչո՞ւ:
5. Ձեր կարծիքով ինչպիսի՞ն պետք է լինի հայ զինվորը:

դ) Նոր նյութի ամրապնդում, իմաստավորում, յուրացում և ամփոփում

Ինչպես մյուս դասերին, այնպես էլ այս դասին նոր նյութի ամրապնդումը կատարվում է կրկնությունների, մարզողական և բացատրական վարժությունների միջոցով: Քանի որ նոր դասանյութի բովանդակության մեջ չկան փաստական տվյալներ, կոնկրետ դեպքեր և իրադարձություններ, ուստի ուսուցիչը հիմնականում կիրառում է ոչ առարկայական վարժություններ և առաջադրանքներ, խաղեր ու գծապատկերներ: Խաղերից մեկը կոչվում է «Կա կամ չկա» («Եղել է, չի եղել»): Ուսուցիչը գրատախտակին գրում է նախադասություններ և հանձնարարում կարդալ ու պատասխանել՝ կա թե չկա: Օրինակ՝

1. Գյուղում գործող առևտրի կենտրոնը կոչվում է մոլ (չկա):
2. Քաղաքում զարգացած է այգեգործությունը:
3. Գյուղն ունի անասնապահական տնտեսություն:
4. Քաղաքն ստացել է գյուղական բնակավայրի կարգավիճակ:

5. Քաղաքում կենտրոնացված են արդյունաբերական ձեռնարկությունները:
6. Գյուղում կառուցվել է մարզահամերգային համալիր:

Հաջորդ խաղի միջոցով ամրապնդվում են սովորողների աշխարհագրական գիտելիքները: Ուսուցիչը հանձնարարում է ջնջել ստորև բերված աղյուսակում գրված կրկնվող ձայնավորները և կստանան (որը և Ա. Բակունցի ստեղծագործության անունն է) անվանումը:

մ	ի	ի	օ	է	թ	է
ն	օ	ու	ա	ու	ե	է
ձ	ու	օ	ո	ի	ե	ր

Եթե ժամանակի խնդիր չի առաջանում, ապա ուսուցիչը կարող է շարունակել նոր խաղերի ու վարժությունների առաջացումը (օրինակ՝ «Լուծեք գրաշրջությունը», «Գուշակեք շարունակությունը» և այլն): Դրանք ոչ միայն կենտրոնացնում և զարգացնում են սովորողների ուշադրությունը, այլ նաև նպաստում են նրանց գիտելիքների խորացմանը և տարբեր իրավիճակներում կիրառմանը: Որպես ինքնուրույն անհատական աշխատանք՝ ուսուցիչը հանձնարարում է դասանյութի որոշ պարբերությունները վերապատմել սեփական բառերով, որից հետո քննարկվում է, թե որքանով է դա նրանց հաջողվել, և ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել այդ դեպքում: Նոր ձեռք բերված գիտելիքների համադրման և ընդհանրացման նպատակով ուսուցիչը կարող է կիրառել «հնգյակներ» մեթոդական հնարը: «Հնգյակները» մի բանաստեղծություն է, որը գրելու համար սովորողներին տրվում է հետևյալ ուղեցույցը.

- առաջին տողը մեկ բառ է, որը նկարագրում է հասկացությունը (սովորաբար՝ գոյական)
- Երկրորդ տողը բաղկացած է հասկացությունը նկարագրող երկու բառից (սովորաբար՝ ածական),
- երրորդ տողը բաղկացած է երեք բառից, որոնք արտահայտում են հասկացության հետ կապված գործողություններ,
- չորրորդ տողը բաղկացած է չորս բառից կազմված արտահայտություններից, որոնք ցույց են տալիս հասկացության նկատմամբ զգացմունք կամ վերաբերմունք,
- վերջին տողը մեկ հոմանիշ բառ է, որն այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը:

Եթե այս հնարը կիրառվում է առաջին անգամ, ցանկալի է, որ ուսուցիչը նախապես ներկայացնի իր կազմած հնգյակների մեկ-երկու օրինակներ: Այնուհետև առաջարկում է թեմայի շուրջ գրել հնգյակներ, քննարկել դասընկերոջ հետ և ներկայացնել նրանցից լավագույնը: Ընդ որում, որպես սկզբնաբառ, խրախուսվում է հուզական ընկալում և վերաբերմունք արտահայտող (զգացմունքներ, հույզեր, զարմանք, հիացմունք և այլն)

բառերի ընտրությունը: Սովորողներին ներկայացրած հնգյակներից մեկը կարող է լինել մոտավորապես այսպիսին.

- ծննդավայր,
- թանկագին, գեղեցիկ,
- հրապուրող, ոգևորող, հուսադրող,
- անհոգ մանկության հուշերի ակունք,
- օջախ:

Ուսուցանվող թեմայի վերաբերյալ սովորողների ստացած գիտելիքների, առանցքային գաղափարների համակարգումն ու ամփոփումը կատարվում է հինգ րոպեանոց շարադրանքի միջոցով: Սովորողներից պահանջվում է գրել, թե ինչ սովորեցին դասանյութն ուսումնասիրելիս և նշել դասանյութի վերաբերյալ մի հարց, որի մասին կցանկանային ավելին իմանալ: Ուսուցիչը շարադրությունները կարող է հավաքել, ուսումնասիրել և օգտագործել հաջորդ դասի կամ մեկ այլ դասի պլանավորման ժամանակ:

Տնային աշխատանք

Տնային աշխատանքի բոլոր հարցերը և առաջադրանքներն ունեն բարդության տարբեր մակարդակներ: Աշակերտները բոլոր առաջադրանքները չէ, որ պետք է կատարեն: Նրանք կատարում են այն աշխատանքները, որոնք համապատասխանում են իրենց հնարավորություններին և ընդունակություններին:

Որպես տնային աշխատանք՝ ուսուցիչը հանձնարարում է.

1. Վարժ և սահուն կարդալ տեքստը:
2. Պատասխանել դասի 1-4-րդ հարցերին:
3. Հ. Սահյանի «Ախր ես ինչպես...» բանաստեղծությունը վերաշարադրել պատմվածքի ձևով և ընդգծել հիմնական գաղափարները:
4. Ուշադիր դիտեք Մ. Սարյանի «Հայաստան» նկարը և փորձեք նոր վերնագիր գտնել նրա համար:
5. Կարդալ և վերաշարադրել «Հայրենի հողի բույրը» լրացուցիչ նյութը և պատասխանել նրա վերջում եղած հարցերին

Հավելված 1

Հայրենի գյուղ

Ահա մեր գյուղը գետակի ափին,
Մանուկ օրերից մոտիկ իմ սրտին,
Այնտեղ եմ ես իմ աչքերը բացել,
Այնտեղ է մայրս ինձ օրոր ասել,
Այնտեղ առաջին ուսումս եմ առել,
Այնտեղ եմ ես գործ, աշխատանք սիրել:
Իմ սրտին շատ մոտ, հարազատ է նա,
Մեր գյուղը երբեք ես չեմ մոռանա:

Հ. Հայրապետյան

Հավելված 2

***

Կարծես թե դարձել եմ ես տուն,
Բոլորն առաջվանն է կրկին.
Նորից դու հին տեղը նստում,
Շարժում ես իլիկը մեր հին.
Մանում ու հեքիաթ ես ասում,
Մանում ես անվերջ ու արագ.
Սիրում եմ պարզկա քո լեզուն,
Ձեռներըդ մաշված ու բարակ:
Նայում եմ, մինչև որ անզոր
Գլուխըս ծնկիդ է թեքվում.
Նորից ես մանուկ եմ այսօր,
Դրախտ է նորից իմ հոգում:
Արևը հանգչում է հեռվում,
Գետից բարձրանում է մշուշ,
Հեքիաթըդ անվերջ օրորում,
Իլիկըդ խոսում է անուշ...

Վ. Տերյան

Է) Դասի պլան

Այս դասի պլանի կառուցվածքի ընդհանրական նմուշ-օրինակի մշակումը կատարվել է վերապատրաստման ընթացքում ուսուցիչների ձեռք բերած գիտելիքներին ու հմտություններին համապատասխան: Այն կազմված է դասին ներկայացվող ժամանակակից պահանջներին, դիդակտիկական սկզբունքներին, մանկավարժական տեխնոլոգիաներին և մեթոդներին համահունչ: Դասի պլանը ընդհանրական է, իսկ դա նշանակում է, որ նրա կառուցվածքում որոշ փոփոխություններ կատարելով հնարավոր է տեղավորել գրեթե ցանկացած դասատիպ:

Դասարանը ——————— ամսաթիվը ——————————

Ուսուցիչը ——————————————

Առարկան ——————————————

1. Դասի թեման ——————————————

հիմնական հարցերը.

- ——————————————
- ——————————————
- ——————————————

2. Դասի նպատակը

——

——

3. Դասի խնդիրները

ա. Կրթական (ակադեմիական)

- գիտելիք _____

  _____

- հմտություն _____

  _____

բ. Դաստիարակչական

- վերաբերմունք _____

  _____

- արժեքներ _____

  _____

գ. Զարգացման

- մտածողություն _____
- երևակայություն _____
- հիշողություն և ուշադրություն _____
- կամք, կամային որակներ _____
- զգացումներ, հույզեր, ապրումներ _____

4. Վերջնարդյունքներ

- ա) իմանա _____

  _____

- բ) կարողանա _____

  _____

5. Ուսուցման միջոցները (ուսումնադիտողական պարագաներ)

ա. դասագիրք _____

բ. ուսումնական նյութեր _____

գ. զննական _____

- պատկերային-զննական

  _____

  _____

- պայմանական-գրաֆիկական

  _____

  _____

- անհատական-բաշխիչ քարտեր

  _____

  _____

6. Միջառարկայական և ներառարկայական կապեր

_____

_____

7. Դասատիպեր

_____

8. Ուսուցման մեթոդներ, հնարներ

_____

9. Դասի փուլերը և ընթացքը

ա. *Կազմակերպչական աշխատանքներ*

- սովորողների հաշվառում_____
- դասարանի՝ աշխատանքային վիճակի բերում_____
- աշխատատեղերի նախապատրաստում_____
- ուսումնական մթնոլորտի ստեղծում_____

բ. *Մինչև նոր նյութի ուսումնասիրումը (տնային աշխատանքի ստուգում, արդյունքների պարզում)*

- տնային հանձնարարությունների քննարկում հետադարձ կապի միջոցով_____
- հենակետային գիտելիքների արդիականացում (ակտիվացում, հայտորոշում)_____

գ. *Անցում նոր նյութի ուսումնասիրման*

- թեմայի նպատակի և խնդիրների հայտնում———
- թեմայի վերաբերյալ հենակետային արդիականացում (ակտիվացում, վերականգնում)———————————————————————
- նոր նյութի խթանում և մոտիվացիայի (շարժառիթների) ստեղծում———————————————————————————————————
- անցած և նոր նյութերի միջև կապի ապահովում———

դ. *Նոր նյութի ընկալում և ըմբռնում*

- նոր նյութի բովանդակության ամբողջական պատկերի ստեղծում———————————————————————————————
- նոր ուսումնական նյութի ընթերցում (պատմում, հաղորդում, քննարկում և այլն)———————————————————————
- աշխատանք դասագրքի տեքստի և այլ ուսումնական նյութերի վրա———————————————————————————————
- նոր նյութի ըմբռնում և գիտակցում (նյութի մեջ օբյեկտիվ կապերի և հարաբերությունների հայտնաբերում)———————————

ե. *Նոր նյութի ամրապնդում և իմաստավորում*

- տեքստի վերարտադրություն———
- մարզողական և բացատրական վարժություններ———————————————————————————————————————
- նոր նյութի վերլուծություն, համադրություն, համեմատություն, ներառարկայական և միջառարկայական կապերի և հարաբերու-թյունների բացահայտում, ընդհանրացում և այլն———————————————————————————————————————

զ. *Նոր նյութի յուրացում*

- գիտելիքների կիրառում և ընդհանրացում———————————————————————————————————————
- նյութի վերաշարադրում սեփական բառերով———————————————————————————————————————
- գիտելիքների կիրառումը ծանոթ իրավիճակում———————————————————————————————————————
- գիտելիքների կիրառումը անծանոթ իրավիճակներում———————————————————————————————————

Է. *Գնահատում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում*

Ը. *Հետադարձ կապ, ամփոփում*——-

Թ. *Տնային հանձնարարություն (միտված վերջարդյունքներին)*

- տարբերակված առաջադրանքներ——

- վերարտադրական, որոնողական, ստեղծագործական առաջադրանքներ——————————————————————————————

ԲԱԺԻՆ IV. ՀԱՎԵԼՎԱԾ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ

ա) Միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կորողունակություններ

6. Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

7. Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

8. Միջնակարգ կրթության կարողունակություններն են՝

ա. լեզվական գրագիտություն և կարողունակություն. սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր.

բ. սովորել սովորելու կարողունակություն. սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության

պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն.

գ. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն. սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում: Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում սովորողներն ընդունակ են ճանաչել դրանց տարբերությունները.

դ. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն. սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողներն արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետահիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն.

ե. թվային և մեդիա կարողունակություն. սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին. պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրանց հետ կապված ռիսկերը, ունակ են գնահատելու և վերափոխելու իրենց վարքը թվային աշխարհում՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից:

Տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով.

զ. մշակութային կարողունակություն. սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ.

է. մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն. սովորողներն առօրյա կյանքում օգտագործում են մաթեմատիկական մտածողություն՝ բնության, հասարակության, մշակույթի և աշխատանքային ոլորտի երևույթները ճանաչելու և դրանք մաթեմատիկական կառուցվածքների, բանաձևերի, մոդելների, կորերի, աղյուսակների միջոցով հասկանալու համար: Աշակերտները կարողանում են ընկալել և արդյունավետ կիրառել վերացարկված և ընդհանրացված հասկացությունները և ճանաչել իրականության մեջ դրանց արտացոլումները: Նրանք ընկալում են բնագիտական մտածողության և աշխատանքի, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի միջև եղած փոխադարձ կապը: Աշակերտներն ընկալում են տեխնոլոգիական գիտելիքի կիրառման հնարավորությունները մարդու պահանջմունքների համատեքստում, ճանաչում են մարդու գործունեության արդյունքում ի հայտ եկող փոփոխություններն ու սեփական պատասխանատվությունը.

ը. տնտեսական կարողունակություն. աշակերտները համարժեք վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և պետության դերը տնտեսության մեջ, ինչպես նաև այդ գործընթացներում ճանաչում, գնահատում և արժևորում են կնոջ և տղամարդու ունեցած դերը: Նրանք հասկանում են հասարակության, տնտեսության և քաղաքականության միջև եղած փոխազդեցությունները: Աշակերտներն ընկալում են տնտեսական և հասարակական կարգերն ու ճանաչում են բնության և հասարակության փոխազդեցությունները, ինչպես նաև կայուն զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական դերն ու պատասխանատվությունը:

բ) Հայրենագիտություն բնագավառի ուսուցման նպատակները միջին դպրոցում

2. Հիմնական (միջին) դպրոցում «Հայրենագիտություն» բնագավառի ուսուցման նպատակն է՝

1) Ձևավորել գիտելիքներ՝

ա. Հայոց հայրենիքի պատմաաշխարհագրական պայմանների, առանձնահատկությունների, սահմանների, պատմավարչական բաժանումների վերաբերյալ:

բ. հայոց քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքի, ձեռքբերումների ու բացթողումների վերաբերյալ:

գ. հայ ժողովրդի ակունքների, մշակութային ժառանգության, պետական ու եկեղեցական տոների, ծեսերի, սովորույթների, ավանդույթների վերաբերյալ:

դ. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հոգևոր-մշակութային առանձնահատկությունների վերաբերյալ:

2) Ձևավորել և զարգացնել՝

ե. պատմական իրադարձությունները, երևույթները, փաստերը, դրանց փոխկապակցվածությունն ու պատճառահետևանքային կապերը համեմատելու և մեկնաբանելու կարողություններ և հմտություններ:

զ. ազգային մշակույթի ձևավորման և տարբեր շրջափուլերում մշակույթի զարգացման առանձնահատկությունները վերլուծելու, հայ ժողովրդի պատմամշակութային արժեքների տեղն ու նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ գնահատելու կարողություններ և հմտություններ:

է. պատմական մտածողությունը և պատմությունից դասեր քաղելու կարողություններ և հմտություններ:

ը. քննադատական մտածողությունը, հետազոտելու, աղբյուրների հետ աշխատելու, հաղորդակցվելու, վերլուծելու, գնահատելու, հարցադրումներ կատարելու, լսելու, քննարկելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հիմնավորելու, որոշումներ կայացնելու կարողություններ ու հմտություններ:

թ. պատմական գործընթացներում անհատի, հասարակության և շրջակա միջավայրի փոխազդեցությունը վերլուծելու կարողություններ և հմտություններ:

3) Նպաստել՝

ժ. ազգային հոգևոր-մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, հաջորդ սերունդներին փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտության գիտակցման ձևավորմանն ու զարգացմանը:

ի. իր և սերունդների միջև կապի ըմբռնմանը:

լ. ազնիվ, հայրենասեր, պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

գ) Հանրակրթական հիմնական ծրագրի «Հայրենագիտություն» բնագավառի՝ «Իմ հայրենիքը» առարկայի 5-րդ դասարանի վերջնարդյունքները

1) Նկարագրի իր բնակության վայրը, պետությունը, հայոց հայրենիքը, նրա աշխարհագրական դիրքը, սահմանները, պատմաաշխարհագրական միջավայրը:
2) Ներկայացնի հայրենիքի խորհրդանիշները:
3) Մեկնաբանի և կիրառի զանազան քարտեզներ:
4) Գնահատի իր համայնքի, ազգի պատմամշակութային ձեռքբերումները:
5) Մեկնաբանի Հայկական լեռնաշխարհի բնակիչների ավանդական զբաղմունքը, առօրյա կյանքն ու կենցաղը, նյութական և հոգևոր մշակույթի բաղադրիչները (մշակույթը և կենցաղը, ազգային տարազը, խոհանոցը, կիրառական արվեստը), ավանդույթները, տոներն ու ծեսերը:
6) Վերլուծի հայ ժողովրդի ծագման մասին ավանդապատումները՝ ներկայացնի դրանց ազդեցությունը իր ինքնության ձևավորման վրա:
7) Վերլուծի տեղանքի ու իրադարձությունների, պատմաաշխարհագրական տեղանունների հետ կապված ավանդապատումները:
8) Գնահատի ազգային հոգևոր-մշակութային արժեքները՝ որպես համամարդկային արժեքներ:
9) Ներկայացնի Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ավանդական մշակույթի ու կենցաղի բնորոշ առանձնահատկությունները:
10) Ուսումնասիրի քրիստոնեության հոգևոր, բարոյական, արժեքային համակարգի հիմունքները:
11) Նկարագրի պատմական և մշակութային գործիչներին, նրանց գործունեությունը քրիստոնեության ընդունման և տարածման գործում:
12) Մեկնաբանի Հայ առաքելական եկեղեցու խորհուրդները:
13) Նկարագրի Հայաստանում բնակվող այլ ժողովուրդների կրոնա դավանաբանական համակարգերը:
14) Համեմատի նախաքրիստոնեական և քրիստոնեական արժեհամակարգային ընդհանրություններն ու առանձնահատկությունները հայ հասարակության մեջ:
15) Վերլուծի «Սասունցի Դավիթ» էպոսում ներկայացված արժեհամակարգը:
16) Համեմատի և հակադրի «Սասունցի Դավիթ» էպոսի և այլ ժողովուրդների էպոսներում ներկայացված արժեհամակարգային ընդհանրություններն ու առանձնահատկությունները:
17) Տարբերակի էպոսի հերոսների գործունեությունը:
18) Մեկնաբանի էպոսի հերոսների բնավորության գծերը և գնահատի նրանց ազդեցությունը իր վարքի դրսևորման վրա:
19) Հետազոտի և բացահայտի սեփական շրջապատում էպոսի «մերօրյա» հերոսներին:
20) Ուսումնասիրի անհատի ազդեցությունը հայ հասարակության վրա:
21) Վերլուծի անհատի դերը հասարակության զարգացման տարբեր բնագավառներում:

22) Գնահատի անհատի դերը հասարակության կյանքում՝ ձևավորելով հարգալից վերաբերմունք նորարարություն արժեհամակարգի վերաբերյալ:

2. «Իմ հայրենիքը» առարկայի ծրագիրը

«Իմ հայրենիքը» առարկայի ծրագրի հղում՝

https://escs.am/files/files/2022-12-08/a78e1ea9e42c234fb1677fa1182d6ca7.pdf

3. Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ

Գնահատման չափանիշների հղում՝

https://iravaban.net/418029.html

4. Գրականության ցանկ

ա) Փաստաթղթային

1. Հանրակրթության մասին ՀՀ օրենքը:
2. Հանրակրթության պետական չափորոշիչ, հաստատված ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ: http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176088 10/12
3. Հանրակրթության պետական կրթակարգ, միջնական կրթության պետական չափորոշիչ, Երևան, «Անտարես», 2004:
4. «Հանրակրթության պետական կրթակարգ», ՀՀ կառավարության նիստի հ. 33 արձանագրային որոշում, 26.08.2004 թ.:
5. Հանրակրթական հիմնական դպրոցի «Հայոց պատմություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր (6-9-րդ դասարաններ) (ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թ. հունվարի 23-ի N 49-Ա/Ք հրաման):
6. Հանրակրթական ավագ դպրոցի «Հայոց պատմություն» առարկայի չափորոշիչ-ներ և ծրագրեր (ՀՀ կրթության և գիտության նախարարի 04.05.2009թ. N 381-Ա/Ք հրաման):
7. Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքի գնահատման ուսումնասիրություն, պատրաստ-վել է «Ի-Վի քոնսալթինգ» ՓԲԸ-ի և «Այբ» կրթական հիմնադրամի կողմից, ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» գրասենյակի պատվերով, Երևան, 2016:

8. Չափորոշիչներ՝ ՀՀ, NGSS, Էստոնիա, Սինգապուր, Ֆինլանդիա, Մասաչուսեթս, Կանադա, Cambridge GSE, IGCSE, Միջազգային բակալավրիատ, TIMSS ստուգա-թեստի ծրագիր:

բ) Առարկայական

<u>- սկզբնաղբյուրներ</u>

1. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983:
2. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987:
3. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981:
4. Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1989:
5. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981:
6. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն.թուղթ Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982:
7. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Երևան, 1986:
8. Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971:
9. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1991:
10. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982:
11. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986:
12. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Անթիլիաս, 1977 /կամ ցանկացած հրատարակություն/:
13. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., Հայաստան, 1969:
14. Ղևոնդ, Պատմություն, Եր., Սովետական գրող, 1982:
15. Կարապետ Պալաթեցի, Ապաշխարություն, Ս.Էջմիածին, 1996
16. Գր. Նարեկացի, Մատյան Ողբերգության, Երևան Նաիրի, 2002 /կամ ցանկացած հրատարակություն/
17. Ս.Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, «Գանձասար» հանդես, 1991:
18. Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980:
19. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Եր., 1964:
20. Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880:
21. Կանոնագիրք Հայոց, հ.Ա, Եր., 1964, հ.Բ, Եր., 1971:

- **<u>գիտական և գիտահանրամատչելի</u>**

22. Ալիշան Ղ., Հայ հին հավատքը և հեթանոսական կրոնը, Երևան, 2002:
23. Անտոնյան Գ., Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու, Հայաստանի Հանրապետության պետական տոներ, հիշատակի օրեր, Վանաձոր 2005 :
24. Ավագյան Է., Կորած գաղտնիք, Երևան, 1985:
25. Ավետիսյան Կ., Աշխարհագրական անունների բացատրական բառարան, Երևան, 1983:

26. Ավետիսյան Կ. և Ավետիսյան Ա., Հայրենագիտական էտյուդներ, Երևան, 1979:
27. Բդոյան Վ., Հայ ազգագրություն, Երևան, 1974:
28. Բեդիրյան Պ., Բառերի խորհրդավոր աշխարհում, Երևան, 1985:
29. Գաբրիելյան Հ., Հայկական լեռնաշխարհ, Երևան, 2000:
30. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980:
31. Գրիգորյան Գ., Հին և միջնադարյան Հայաստանի պատմավիպական հերոսները, Երևան, «Լույս», 1990:
32. Գերման Կ., Աստվածներ, գիտնականներ, դամբարաններ, Երևան, 1971:
33. Դավթյան Շ., Սիսիանի բնակավայրի պատմությունը, Երևան 1997.:
34. Դևկանց Ա., Հազար տարվա բառ ու բան, Երևան, 1985:
35. Դիլանյան Ս., Մոռացված գանձերի արձագանքը, Մանկական հանրագիտարան, Երևան, «Արեգ», 2001:
36. Դուրգարյան Կ., Անվանագիրք, Երևան, 1985:
37. Եղիազարյան Հ., Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները, Երևան 1975:
38. Եղիազարյան Հ., Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան 1955:
39. Լալայան Ե., Երկեր, հ 1, 1983թ., Երկեր, հ 2, 1988:
40. Լիպս Յու., Իրերի ծագումը, մարդկության կուլտուրայի պատմությունից, Երևան 1957:
41. Խաչատրյան Հ., Արքայապատում, Երևան, 2000:
42. Խաչատրյան Հ., Հայագիտակ, Երևան, 1990, 1991:
43. Խաչատրյան Հ., Հայոց թագուհիներ, Երևան, 2001:
44. Խաչատրյան Հ., Հացապատում, Երևան, 1988:
45. Խաչատրյան Հ., Սոսյան անտառ, Երևան, 1988:
46. Խաչատրյան Հ., Վանատուր, Երևան, 1988:
47. Կուն Ն., Հունական լեգենդներ առասպելներ (ցանկացած հրատարակություն):
48. Հակոբյան Թ., Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրեր, Երևան, 1990:
49. Հակոբյան Թ.,Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987:
50. Հակոբյան Թ., Սովետական Հայաստանի քաղաքները, Երևան, 1977:
51. Հարությունյան Ա., Երևանը և շրջակայքը, Երևան, 2012:
52. Հարությունյան Ս., Հայ հին վիպաշխարհը, Երևան, 1987:
53. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969:
54. Ղուկասյան Ա., Հայրենի ավանդավեպեր, Երևան, 1985:
55. Մարգարյան Գ., Խաչատրյան Ա., Վայոց ձոր, Երևան 1980 :
56. Միրիջանյան Լ., Հայկյաններ, Երևան, 1986:
57. Մնացականյան Ստ., Երևանը և նրա շրջակայքը, Երևան 1971:
58. Մնացականյան Ստ., Վարպետաց Վարպետներ, Երևան 1982:
59. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, (ցանկացած հրատարակություն):
60. Չուգասզյան Բ., Ձեռագրերի աշխարհում, Երևան 1985:
61. Ջահուկյան Գ., Զրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, «Կանչ», 1992:
62. Սանթրյան Վ., Մաշտոցի որդիները, Երևան, 1985:

63. Սահակյան Ս., Հերոսապատում, Երևան, 1990:
64. Սարգսյան Է., Անդունդների կանչը, Երևան, 1986:
65. Վալեսյան Լ., Նազարյան Խ., Հայաստանի աշխարհագրություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար, Երևան, 1999:
66. Վասիլյան Վ., Առասպելներից մինչև Բյուրական, Երևան, 1985:
67. Վարդանյան Ս., Հայոց մայրաքաղաքները, Երևան, 1985:
68. Ուլուբաբյան Բ., Զրուցարան, հ Բ, Երևան, 1988:
69. Քյուքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Ես իմ անուշ Հայաստանի, «Էդիթ Պրինտ»:
70. Քյուքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Ծաղկաքաղ հայկական հուշարձանների, «Էդիթ Պրինտ»:
71. Քյուքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Սասնա տուն, Երևան, 2015:
72. Քյուքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Հայրենի պատմություններ, Երևան, 2017:
73. Գյուրջինյան Դ., Մատենիկ, Երևան, 2012:
74. Դիլանյան Ս., Հայոց սրբազան լեռները, Երևան 2012:
75. Դիցաբանական բառարան, Երևան, 1985:
76. Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ հանրագիտարան, հ 1-4, Երևան, 1984-87:
77. Հին Հռոմ, Երևան, 1958:
78. Հին աշխարհի պատմության ընթերցարան, Երևան, 1986:
79. «Ոսկեփորիկ» մանկական հանրագիտարան, Երևան, 1996:
80. Մանկական քրիստոնեական հանրագիտարան, Երևան, 1998:
81. Սասունցի Դավիթ էպոս (ցանկացած հրատարակություն):
82. Նյութեր համացանցից՝
http://armenianhistory.info/glossary3.htm,
https://www.armenica.org/,
https://www.encyclopedia.am/encyclopedia.php,
https://www.qahana.am/,
https://www.facebook.com/rubik.kocharian.7
https://www.facebook.com/groups/creationk?locale=ru_RU

գ) Մանկավարժական, մեթոդական

1. Հանրակրթության պետական չափորոշիչ , Երևան, 2021:
2. Հանրակրթության պետական կրթակարգ, Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2004:
3. Գրիգորյան Գ., Տեղական նյութերի օգտագործումը հայ ժողովրդի պատմությունից, Երևան, 1977:
4. Թադևոսյան Պ., Միջառարկայական կապերը պատմության ուսուցման ընթացքում, Երևան, 1971:
5. Թամամյան Գ., Պատմության ուսուցման արդյունավետության մի քանի հարցեր, Երևան, 1972:

6. Թամամյան Գ., Առաջադրանքներ և խնդիրներ հայ ժողովրդի պատմությունից, Երևան, 1977:
7. Ղուկասյան Ա. և ուրիշ., Հայրենագիտություն 5, ուսուցչի ձեռնարկ, Երևան 2007:
8. Աշխարհը և Հայաստանը, աշխարհագրական ատլաս, Երևան, 2004:
9. Գասպարյան Տ., Հովհաննիսյան Գ., Հայաստանի աշխարհագրություն, ձեռնարկ ուսուցչի համար, Երևան, Լույս, 1999:
10. Ղուկասյան Ա. և ուրիշ., Հայ եկեղեցու պատմություն, ուսուցչի ձեռնարկ, Երևան, Կրթական բարեփոխումների կենտրոն, 2003:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 2

Մեթոդական ուղեցույցի մասին 3

ԲԱԺԻՆ I. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ «ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ» ԲՆԱԳԱՎԱՌԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ 4

ԲԱԺԻՆ II. «ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 9

ԲԱԺԻՆ III. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ԹԵՄԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԴԱՍԻ ՊԼԱՆՆԵՐ 34

ԲԱԺԻՆ IV. ՀԱՎԵԼՎԱԾ 64

1. Հանրակրթության պետական չափորոշիչ 64
2. «Իմ Հայրենիքը» առարկայի ծրագիրը 69
3. Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ 69
4. Գրականության ցանկ 69